



331.99.09  
K-43

B

✓

Handwritten: 891.99.09

Handwritten: 43

ԱԼԳԻՔ

Handwritten: 209

ՀՆՈՅՆ ՀԱՅՐԱՍՏԱՆԻ

51

Քննութիւն

Մտաւէ ԼՏԻՆ.

Handwritten: 886

I only say suppose this supposition.

Don Juan, C. I, St. LXXXV.

Handwritten: A / 956



ՄԱՍԿԱՆ

Ի պատիւն Ալաբաբեան Գաղափար  
1850.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

по опредѣленію Совѣта Лазаревскаго Института Восточныхъ Языковъ,  
на основаніи § 61 Высочайше утвержденнаго Устава оного Инсти-  
тута. 10 Мая 1850 года.

Исправляющій должность Секретаря Совѣта, *Ивановъ.*

~~5739~~

~~5739~~

Մ. Ը մեզ չիք պատմութիւն Վրականութեան :  
Օր ինչ հայ և օտարազգի հեղինակք մինչ ցայս  
օր ժամանակի գրեցին ըստ այսմ մասին՝ լոկ տեղե-  
կութիւնք են վասն մատենագրաց և գործոց նոցին,  
և այն թերի բազմօք: Վննել ըստ կանոնաց մակա-  
ցութեան զմատենագրութիւնս մերոցն, և ցուցանել  
զյատկութիւնս և զնշանակութիւն իւրաքանչիւրոցն  
'ի նոցանէ՝ որոշելով 'ի նոսին զոր ինչ հեղինակին  
է սեպհական և զոր ինչ առ դարն, յորում կեցին՝  
վերաբերելի, այդպիսի երկասիրութիւն՝ ցաւէ ինձ  
ասել, անծանօթ է մերոցն: Աւ որովհետեւ չէ ու-  
րուք ձեռնամուխ լեալ յայդպիսի գործ, յոյր սակս  
և յոլովք 'ի բանասիրական խնդրոց, առ հայ դրպ-  
րութիւն վերաբերեալք, մինչ ցարդ անլուծանելի  
մնան: Վ սոցին սակի և զայլոցն երգ ունել պարտ  
է, որոց գոյութիւն առ մեզ՝ չգիտեմ էր վասն, միա-  
կամ յամենեցունց ժխտի: Մ. Ե կարծիք՝ ներելի 'ի  
շրթունս օտարաց, անթողլի է մերայոց, որք ինք-  
նակամ հրաժարին 'ի հայրենի ժառանգութենէ:  
Վանզի լեալ են արդարեւ և առ մեզ՝ որպէս առ  
ամենայն ազինս աշխարհի առանց բացառութեան,  
ազգային երգք, որոց նշխարք ծածկեալ մնան 'ի

Պատմութեան Վոլսիսի Վորենացոյ: Յառաջիկայ  
երկասիրութեանս գուն գործեցաք 'ի մի ժողովել  
զայնս՝ ամբողջութիւն հաղորդելով նոցուն, և զնո-  
ցին ցուցանելով նշանակութիւն 'ի պատմութեան  
հայոց: Բնութեցողին է իմաստասիրել, յաջողեցաւ  
արդեօք այդ մեր երկասիրութիւն, թէ ոչ:

Բայց խնդրելի է՝ եթէ է՞ր սակս ոչ ախորժեցան  
բանասէրք 'ի քնին առնուլ զնշխարսդ զայդոսիկ, որ  
մի 'ի գլխաւոր աղբերաց Պատմութեան Վերթողա-  
հօրն երևի լինել: Բստ մեզ՝ ըմբռնումն քանի մի  
բառից, որոց նշանակութիւն անորոշ ստուգաբա-  
նեալ տեսանի 'ի Վառարանս մեր, թուի լինել միակ  
և եթ պատճառ անսիրտութեանդ: Սին իրի և մեք  
կարևոր դատիմք 'ի սկզբան աստ սակաւամասն աշ-  
խատասիրութեանս՝ 'ի զնին առեալ զայդոսիկ բառ-  
սըդ, որոշել զնոցին նշանակութիւն և ապա բուռն  
հարկանել զքննութենէ նշխարաց ազգային պատմա-  
կան երգոց՝ պահպանելոց կամ յիշատակելոց 'ի Պատ-  
մութեան Վորենացոյն: Եւ այս են բառք, որք ըստ  
մեզ՝ մեկնութեան կարօտին. Ս. Է. Մ., Ս. Է. Մ., Ս. Է. Մ.,  
Օ. Բ. Մ., Ս. Է. Մ. կամ Ս. Է. Մ. էլ է:

'Ի սոցունց առաջինն, որ է Ս. Է. Մ., բացատրի 'ի  
Նոր Վառարանին այսպէս. »Տին զրոյցք՝ իրական կամ  
ստայօդ, պատմութիւն արհաւ կամ +երեւոյտիւն.« (1) որ  
է ստուգաբանութիւն ճիշդ: Վանդի այդ բառ՝ գո-

(1) Տե՛ս Նոր Վառարանի հայկազեան լեզու-ի, Ս. Է. Մ. է. Մ. է. Մ.,  
1836—37. հատ. 7. էր. 819:

լու մին 'ի հասգոյն բառից լեզուի մերոյ, առ հինսն  
մեր զնոյն նշանակէր, զոր առ Յոյնս էպոս, այսինքն՝  
պատմութիւնն + երկողական կամ պատմական բանաստեղծու-  
թիւն. ըստ յետնոց՝ դիւցազնական բանաստեղծութիւն,  
ըստ Խորենացոյ՝ պատմութիւնն ըագաւորաց՝ 'ի Սաս-  
եանս Թագաւորաց ամփոփեալ, չափաբերական և ոչ ար-  
չակ: Այս ապացուցանի բանիւք Վերթողահորն,  
որ 'ի Սատմութեան իւրում 'ի բերելն պէտք զի-  
պատմաց՝ ամենուրեք երգ կոչէ զայնս: Ուրեմն Սէպտի-  
մոս ոչ այլ էնչ էր, բայց էնէ + երկողական պատմութիւն  
չափաբերական, յորում պարծո՞ւ + անոց և ըագաւորաց երգէին,  
որ և առ արդի Արոպացիս Épopée անուամբ սո-  
վորաբար յորջորջի:

Յետ այսորիկ Սէպտիմոս անուն ինքնին որոշեալ  
տեսանի, որոյ և նշանակութիւնն յայտնի: Վանդի-  
կէն Սէպտիմոս վերթողական պատմութիւնն է չափա-  
բերական, ուրեմն Սէպտիմոս բանաստեղծն է, զոր  
առ Սէպտիմոսանս poëte épique անուանեն:

Սէպտիմոս բարդեալ է 'ի վէպ և 'ի ո՞ր բառից,  
յորոց յետինդ արմատ է բայիս Սէպտ. իսկ ո՞ր առ  
հինսն մեր նշանակէր Արգէս: Ուրեմն ո՞ր վէպն ո՞ր  
է ընդ՝ երգել վէպն, պատմական երգն: Սակայն յաշխար-  
հիկ լեզուի մերում պահպանեալ տեսանի այդ նախ-  
կին նշանակութիւնն 'ի սովորական բանիս »խաղ ո՞ր« ,  
որ է երգ երգել:

Օհակառակն Սէպտիմոսի նախնիք մեր Օրոյն կոչէին,  
որ էր պատմութիւնն արչակ և ոչ չափաբերական, հին  
աւանդութիւնք՝ բերանացի զրուցեալք, յանցանել

դարուց ժողովեալք և 'ի գիր արձանացուցեալք՝  
ըստ խորենացւոյն, որ ասէ »Մ.ՅԺԺ առ մեզ գտա-  
նին անբաւ Օրոյաց Տարեանս« (²). որ առ Աւրոպա-  
ցիս die Sage, Сага, Сказаніе կոչի:

Մասուել կամ Մասուելի առ մեզ յայլևայլ միտս  
առեալ լինի. բայց հնագոյն նշանակութիւն նորա է  
Վեպտանուրիւն կամ պոպոսուրիւն, յորում նախնի աշխտ  
այլաբանօրէն պշտորոսուրիւն ասեալ էին: Մասալէս 'ի կեր  
առեալ տեսանի այդ բառ առ Վերթողահօրն 'ի  
բազում տեղիս, զոր Մրեմտեանք սովորաբար Μυθῶν,  
Mythe, Fable ասեն և 'ի հնումն առ նոսա vera  
narratio սահմանիւր:

Մասալէս ճշդութեամբ նշանակեալ զզօրութիւն  
միոյ միոյ 'ի բառիցդ՝ բունն հարցուք զքննութե-  
նէս, զոր իբրև առաջին քրտունք յասպարիսի հայ  
Պարութեան՝ 'ի դատաստան անաչառ բանասիրաց  
հանել ոչ դանդաղիմք:

---

(²) Գեղտ ն. 42 4:

Ընդաբոյս է մարդոյ զարժանայիշատակն 'ի գործս  
ընկերին 'ի յիշողականին դրոշմել և յետագայիցն  
հաղորդել աւանդութեամբ: Արդարև ազդոյ իմն եղա-  
նակաւ ներգործել ունէին յերևակայութիւն նորա  
սխրագործութիւնք նախնի նահապետաց և առաջնոր-  
դաց ժողովրդեան՝ պաշտպան կացելոց նոցա 'ի թըշ-  
նամեաց յարձակմանէ և կամ յանակնկալն տագնա-  
պէ՝ 'ի վերայ հասելոյ: Յայսոսիկ դէպս, ոչ շատա-  
նայր նա զիրացն եղելոց և եթ պատմելով ընկերին  
քանզի բոցավառեալն երևակայութիւն սովորական  
նորա խօսից նոր իմն կեանս հաղորդելով՝ յերգս  
դաշնաւորս յեղափոխեալ ձեացուցանէր զայնս: Սա-  
յապէս առ ամենայն գողցես ազինս 'ի սկզբան անդ  
դպրութեան նոցա՝ զպայտէն երգն նկատեմք, յորս նո-  
քա ուշի մտօք զախորժելին, զարժանին յիշատակի  
և զկրիցն շարժութիւն ամփոփելին: Ա շարս յոգ-  
նատեսակ երգոց ազգայնոց և զպայտէն տեսանեմք,  
յորոց սակի զԱղիականն ունիմ Յունաց, զՄատ-  
եանն Թագաւորաց՝ Շահ Սամէ վերաձայնեալ  
'ի Պարսից, և զայլս առ այլս: Ապաքէն և զմերոց  
հայրենեաց ցանկալի էր մեզ 'ի թիւս սոցին դասել  
զԵՐԳ Վեպտանայ՝ սեպհական իմն անուամբ որոշեալ.

սակայն ոչ տուաւ մեզ այդ ուրախութիւն. քանզի  
 սուր և հուղկահարութիւնք թշնամեաց և անդադար  
 պատերազմունք, ոչ միայն զմերայոցն վսեմական մտաց  
 ծնունդ՝ հողմոյ, հրոյ և սահանաց ջուրց ետուն,  
 այլև ոչ քար թողին 'ի նայաստան 'ի քարի վե-  
 րայ: Թէև երգքս այսոքիկ բնաջինջ անհետացան,  
 սակայն հնախօսն մեր՝ բազմահմուտ ծերունին Սյու-  
 րենայ, ոչ անփոյթ արար զնոքօք. այլ զնշխարս նո-  
 ցուն պահպանեալ աւանդեաց մեզ 'ի Վատմութեան  
 իւրում: Յոլովադիմի երգոցս այսոցիկ յիշատակու-  
 թիւն առ Քերթողահօրն տեսանեմք, յորոց վերայ  
 զնահապետաց նայոց և զնայկազն թագաւորաց ա-  
 րարս շինէ՝ 'ի նախնոյն նայկայ սկսեալ (2107 ա-  
 մօք նախ քան զՔրիստոս) մինչև ցվերջին հայկա-  
 զունն Վահէ (328 ամօք նախ քան զՔրիստոս). և  
 աստի մինչև ցժամանակս Սյուսրովու, որդւոյ Վա-  
 ղարշայ (ամ տեաուն 214), ուր և սպառի այդ աղ-  
 բիւր կենդանի ջուրց՝ յընթացս յոլով դարուց ըզ-  
 միտս և զսիրտ նախնեաց մերոց զովացուցանողաց:  
 'Եւ սոցունց էր՝ որ 'ի կարգ հնագոյն աւանդու-  
 թեանց էին անցեալ յաւուրս Վաղարշակայ (147  
 ամօք նախ քան զՔրիստոս), և էր՝ որ կենդանի էին  
 'ի շրթունս ազգիս մինչև ցսկիզբն վեցերորդ դա-  
 րու, որում նոյն ինքն Սյուրենացին վկայէ: Աւ ոչ  
 էին սոքա անոճ՝ և անշուք երգք, որպէս կամ եղև  
 ոմանց յօտարազգի գիտնոց ասել (3). այլ հրաշա-

(3) Eugène Boré, l'Arménie.

կերտ յօրինուածք և ծնունդ վսեմախոհ մտաց և  
բազմածաղիկն երեակայութեան որդւոց հայաստա-  
նի: Արգքս այսոքիկ, զորս Այորենացի Արգ վիպա-  
սանաց կոչէ, 'ի հնումն առ մեզ՝ որպէս և առ բա-  
զումն 'ի հնագոյն ազգաց Ասիոյ և Աւրոպիոյ, զտե-  
ղի պատմութեան ունէին: Այլ այս ոչ եթէ կարծիք  
նորոց ոմանց բանասիրաց են, այլ նաև արտաքին  
խմաստասիրաց, և զմերն ասասցուք՝ Մար Աբասայ  
և Էլեւտոսին (4) Այորենացւոյ: Վանզի սա յառա-  
ջին գիրս Պատմութեան իւրոյ զյարթութեանց և  
զտիրապետութենէ Արամայ ճառելով՝ զբանս հնա-  
խօս Ասորւոյն 'ի մէջ մոլծանէ, որ զայս յինքեան  
պարունակեն արժանի մտադիր քննութեան զյիշա-  
տակութիւն. »Վայց թէև ոչ 'ի բուն մատեանս  
(այսինքն Թագաւորաց կամ մեհենից) յիշատակեցան՝  
որպէս Մար Աբաս կատինայ պատմէ, 'ի Էրտանոյ  
ոմանոց և յաննշանիոց արտանոց 'ի գոտանականէն այս (այսինքն՝  
պատմութիւն քաջութեանց և տիրապետութեան Ար-  
րամայ) գոտանի ժողովեալ 'ի գեանի արտանեաց (5): « Սո-  
քին իսկ աննշան արք և փոքունք ոմանք էին արդա-  
րև, որք յամենայն դարս և առ ամենայն ազինս զգործս  
քաջաց երգելով՝ անմահացուցին զայնս վասն յետա-  
գայից 'ի պարծանս ազգի իւրեանց: Այլ երևի՝ թէև  
աննշանք, այլ ոչ միանգամայն անկաճք. քանզի 'ի  
դիւան արքունի ժողովեցան և նիւթ տուն իմաստ-

(4) Այորենի կոչէ զսա՝ Աբասայ Փարպեցի:

(5) Այորեն. գիրք Գ. գլ. ԺԴ:

նոց զյիշատակ ազգաց, ազանց և թագաւորաց յաւեր-  
 ժացուցանել, որպէս և մերոյս իսկ Արամայ: Աւ-  
 եթէ յառեցուք զուշ մտաց մերոց յայն մասն քաղ-  
 դէացի մատենին, զոր բերեալ տեսանեմք առ Այո-  
 րենացւոյ <sup>(6)</sup>, յորում և գործք մերոց նախահարց  
 պատմին, և ՚ի նմին ոչ այլ ինչ բայց եթէ զերգս  
 նախնի վիպասանաց գտցուք: Ա՛ի խորթ երեւեցի  
 զոր ասեմքս՝ ընթերցողաց մերոց. քանզի այսու ոչ  
 թեթեացուցանել կամիմք զյարգ հնագոյն պատմու-  
 թեան ազգիս և ոչ խախտել զճշմարտաբանութիւն  
 Վերթողահօրն. քաւ և մի լիցի. այլ նոր և աղօ-  
 տափայլ շող իմն կաթեցուցանել կամիմք յայս նախ-  
 նական մասն Վարուժեան մերոյ, զորով մինչ ցարդ  
 զանց արարին թէ՛ հայ և թէ՛ օտարազգի հեղինակք  
 Վատմութեան Վրականութեանս:

Արդարեւ՝ որպէս ասացաք, պատմութիւն մեր ՚ի  
 Հայկայ սկսեալ մինչև ցԱյոսրով առ Այորենացւոյ  
 մեծաւ մատամք հիմնեալ երևի ՚ի վերայ երգոց վի-  
 պասանայ, որ և ակնյանդիման հանդիսանայ մտադիր  
 քննողաց:

Վախ առաջին՝ վերոյիշեալ Վաղդէացի մատեանն՝  
 ՚ի Մար Աբասայ ՚ի Վինուէ գտեալ, ինքնին վկա-  
 յէ բանից մերոց: Աթէ արդարեւ անխտորտեղէր էին  
 հարքն մեր՝ ըստ ասից Այորենացւոյ, որոց և չեղև  
 բնաւ փոյթ զյիշատակութիւն անցելոց գրով աւան-  
 դել, ուստի՞ ասպա առեալ հեղինակ յիշեալ քաղդէա-

(6) Նոյն գեղ. ն. գլ. Թ:

ցի մատենին և զմերոցս պատմութիւն, շարէ 'ի կարգըս բանից հետո և նախնեաց. յայտ է եթէ յերգոց վիպասանաց: Աւ այսմ Սար Սբաս ինքնին վկայէ 'ի ճառելն զՍբամայ. »այս 'ի փոքունց ոմանց և յաննըշանից արանց 'ի գուսանականէն գտանի ժողովեալ 'ի դիւանի արքունեաց: « Աթէ յարքունի դիւանս 'Անուէի ժողովեալ պահպանէին երգք զՍբամայ՝ և այն 'ի փոքունց և յաննշանից ասացեալք, զինչ ասպա զնախնական ժամանակաց, զՆայկայ և զնորին գործոց երգչաց՝ գուցէ և ականաւորաց, իմաստասիրեսցուք:

Արկրորդ՝ ընթերցեալ ուշի ուշով զոր քաղեալ 'ի Վաղդէացի գրոց՝ մեզ աւանդէ Այորենացին, սքանչանամք ընդ ոճ՝ միանգամայն և ընդ կենդանազիր ոգին, զոր մանաւանդ 'ի քանի մի հատուածս նկատեմք: Սղգային ոգւոյ և եթէ գործ այնպէս երգել զսխրագործութիւնս հսկայատիպ նախահարց մերոց, որպէս 'ի Այորենացւոյ յառաջբերեալ 'ի հատուածս երգեալ տեսանեմք. յորոց կարգի են ն. 'Անուէի Նայկայ (7), Բ. 'Անուէի պարբերալի նորաբնդ (8) և Գ. Ստորաբնդի և Գործի Սբամայ (9):

'Ա քնին առեալ զերեսին հատուածսդ՝ տեսցուք 'ի նոսին ն. զի եթէ Վաղդէացի կամ այլազգի ոմն լինէր հեղինակ վիպասանութեանդ, ասպքէն ոչ այդպիսի իմն սքանչանօք պատմէր զասպատամբութիւն Նայ-

(7) Այորեն. գերո ն. գլ. Գ:

(8) 'Այն. գլ. Ժն:

(9) 'Այն. գլ. Ժգ և Ժդ:

կայ՝ ՚ի մօռացօնա արկեալ բնաւին զ՛Նէլ: Բ. զի նկարագիր նորին իսկ չայկայ, զոր վիպասանն՝ գեղապարշտճ, անհնէայ, Խաչատուր, Խայտալի, Կապուբապուհ կոչէ, ոչ այլ ոք բաց ՚ի սերնդոց չայկայ՝ սարծա՛նօք ՚ի յուշ բերողաց զարարս նախնւոյն իւրեանց, կարէր այդպիսի յափշտակութեամբ մտաց պատկերացուցանել: Գ. զի նկարագիր պատերազմին Մէլայ այնքան զեղուն է մանրապատում հանգամանօք, որ և ամենեքին գողցես առ չայկ վերաբերին, մինչ անհրնար լինի մտադիր ընթերցողին չնկատել ՚ի նոսին հետս երևակայութեան վիպասանին, և այն՝ հայ վիպասանին: Դ. զի եթէ զննել կամեսցուք զոգի վիպասանութեանցդ, տեսցուք և ՚ի նմին զազգային մեր յատկութիւնք, զորս իմանալ կարէր երգիչն հայ և ոչ օտարոտի ոք: Յաւել առ այս և զպատճառ ապրտամբութեան չայկայ՝ այն է, անհնազանդութիւն (<sup>10</sup>), զոր և մատնանիշ ցուցանեն ականաւոր մատենագիրք ազգիս (<sup>11</sup>): Վ. բանս իսկ պատգամաւորին Մէլայ զմերս տեսանեմք բնաւորութիւն ճշդիւ գծագրեալ քանզի ասէ՝ »Մնակեցեր ՚ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջերտացեալ ձեռքէս՝ զցրտութեան սառտա-

(<sup>10</sup>) Մայն. գեղտ մ. գլ. Գ:

(<sup>11</sup>) Գրեգոր Մագեդոնոս ՚ի լղլի երուստ առ Պէտրոս Կաթ. ասէ. »Քանչէ Մարտեան «Երէ հարարութեան և անաստ բնութեան և խոստարանաց բարս՝ ոչ սարտաչայտ յայտուելէ իրութեան յարարանան հասանել: « — Տէ՛ր Գրեգոր Ստրեյն. գեղտ Բ. գլ. ՂԲ:

ցեալ + հոգոց հոգեալ բարեցոյ, և հաստանդեալ ինձ  
կեաց 'ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկ-  
րիս իմում քնակութեան <sup>(12)</sup>։

Իսկ պատմութիւն Մարամայ մուծեալ է 'ի մատեանն  
Քաղղէացի՝ առեալ գլխովին յազգային երգոց՝ ժո-  
ղովեւոց յարքունի դիւանի՝ Սինուէի։ Իաց 'ի վկա-  
յութենէ Մար Մբասայ՝ նաև բանք երգչացն զհա-  
յութիւն նոցին նշանակեն. քանզի շրթունք որդւոց  
հայրենեաց և եթ հնչեցուցանել մարթեն զթաղաւո-  
րէ իւրեանց՝ զոր 'ի քաղղէացի մատենին ամփոփի.  
»Սա (Մարամ) այր աշխատասէր և հայրենասէր եղ-  
եալ՝ լաւ համարէր զմեռանելն 'ի վերայ հայրենեացն,  
քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով  
զսահմանս հայրենիս, և հարազատից արեան նորա՝  
տիրել արանց օտարածնաց <sup>(13)</sup>։

## Մ.

Երբն վերադառնաց՝ առ Սորենացւոյ յիշատակեալ,  
թերևս ամբողջ և ընդարձակ բանաստեղծութիւն  
էր, յորում 'ի հնոցն մերոց աւանդեալ լինէր պատ-  
մութիւն թագաւորաց հայոց։ Մինչև ցսկիզբն վե-  
ցերորդ դարու Երզն այն պահպանեալ մնայր 'ի  
հայաստան և որպէս յայտնի երևի՝ ծանօթ էր մարդ-  
կան ժամանակին. քանզի պատմաբանն մեր յերիս

<sup>(12)</sup> Խորեն. գերտ ն. գլ. ժն.

<sup>(13)</sup> Խորեն. գերտ ն. գլ. ժգ.

դէպս որոշաբար ցուցանէ զնորին գոյութիւն՝ ասելով.  
 »Օ այս մեզ ստուգապէս պատմէ Ուլիւս . . . որում  
 և Պարսից մատեանք Վէյնէն և Նըգն Վիպասանայ (14): «  
 Ղարձեալ. »Մտաշիտի վերջնոյ գործք բազում ինչ  
 ցայտի էն +եղ 'ի Սիպասանայն, որ պատմին 'ի Ղար-  
 Նան (15): « Եւ յայլում վայրի. »Մյս ամենայն . . .  
 ցայտի էն +եղ Նըգն Վիպասանայ (16): « Մտա ուրեմն  
 բաց 'ի վկայութենէ Քաղղէական մատենին, ուստի  
 հանեալ էր Սար Մբասայ զնախկին պատմութիւն  
 ազգիս, և որոշակի այս յիշատակութիւն մատենագր-  
 րին մերոյ զլինելութիւն ազգային պատմական երգոց  
 ակնյանդիման ցուցանէ:

Մբողջութիւն, ընդարձակութիւն և բազմամաս-  
 նութիւն Նըգոյն թէև յառաջասացելովքս անշուշտ  
 ապացուցանի. սակայն յառաւել հաստատութիւն կար-  
 ծեացս՝ բերցուք հատուած մի 'ի գրոց Սորենաց-  
 ւոյ, որ միանգամայն 'ի բաց փարատել ունի զամե-  
 նայն տարակուսանս ըստ այսմ մասին: Օ կնի հաղոր-  
 դելոյ մեզ զնկարագիր բնակութեան Սարացի գեր-  
 եանցն՝ ածելոց 'ի Հայս առ Տիգրանաւ, յաւելու  
 Քերթողահայրն. »Յայտնեն զայս ճշմարտապէս և  
 թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որ-  
 պէս լեմ, մարդիկ կողմանն գինաւէտ գաւառին Ղող-  
 թան. յորս շարին բանք Նըգոցն զՄտաշիտէ և  
 զորդւոց նորա՝ յիշելով այլաբանաբար և զղարմիցն

(14) Սորեն. գեր + բ. գւ. լսլ:

(15—16) Սոյն. գեր + բ. գւ. լսլ:


Վճիգասհայ, վիշապազունս զնոսա կոչելով. զի Վճիգասհայդ 'ի մեր լեզուս է վիշապ: — Վճիգասհայ ճաշ ասեն գործել Վճիգասհայ 'ի սրտաշիտի և խարդաւանակ լեալ նմին 'ի տաճարին վիշապաց (17): Վճիգասհայ Վճիգասհայ ոչ գտեալ ասեն՝ քաջի որդւոյն Վճիգասհայ, տեղի ասարանից՝ 'ի հիմնանալն Վճիգասհայ. նա անց, ասէ, զնաց և շինեաց 'ի մէջ Վճիգասհայ Վճիգասհայ, որ է 'ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ: — Վճիգասհայ, ասեն, Վճիգասհայ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի 'ի բարձիցն Վճիգասհայ (18): « Վճիգասհայ ասեալ զայս հատուած՝ տեսանեմք 'ի նմին բազում մասունս, պարունակօղս յինքեան զզանազան իրագործութիւնս՝ պատշաճեալս այլեայլ անձանց և ժամանակաց:

157439  
5232  
886

Վախ ասաջին՝ զՎճիգասհայ և զզաւակաց նորա տեսանին 'ի նոսին յիշատակութիւնք (565 ամօք նախ քան զՔրիստոս):  
Նրկրորդ անգամ՝ բանք զՎճիգասհայ Վճիգասհայ

(17) »Историческое изображение вставлено в храм драконов. «  
«lui dressa des embûches dans le temple des dragons.» որ է «յարդեմ, բանից Տաճար՝ Վճիգասհայ նշանակէ. յորտեմն պարտ էր ասել — dans le palais des dragons և ոչ dans le temple. Տէ՛ գերտ ամ. էր. 123 բարգճ. նորին:

(18) Ստրեմ. գերտ ամ. գւ. Ն:



ւոյ, որոյ 'ի մտի եղեալ դաւել զարքայն Հայոց՝  
 Մարտաշէս, ճաշ գործէ 'ի պատիւ նորա 'ի տաճա-  
 րին վիշապաց (ամ տեառն 127):

Արրորդ անգամ՝ զրոյցք Վարտաւազդայ՝ զորդւոյ  
 սոյն իսկ Մարտաշիսի, որոյ ոչ գտեալ տեղի վասն  
 ապարանից իւրոց 'ի հիմնարկելն Մարտաշատ քաղա-  
 քի 'ի ձախակողման Արասխայ, անցեալ գնայ և 'ի  
 մէջ Մարաց՝ յԱյրարատ նահանգի բնակելոց, շի-  
 նէ զՄարակերտ 'ի դաշտին Շարուրայ. որ և եղև  
 այս յամի տեառն 129:

Չորրորդ՝ բանք յԱթինկանէ՝ կնոջէ Մարտաշի-  
 սի, որ յառաջբերեալ տեսանին առ Այորեհնացւոյ  
 առանց իրիք փոփոխութեան, որ և բուն խօսք վի-  
 պասանաց երևին լինել, և են այսպէս »Տենչայ Մար-  
 թենիկ տիկին տենչանս, զարտախուր խաւարտ և ըզ-  
 տից խաւարծի 'ի բարձիցն Մարգաւանայ:«

Նովանդակութիւն Արգոյս, որոյ առարկայ և նիւթ  
 'ի պատմութեան ազգի մերոյ առեալք՝ խառն ընդ  
 գործոց վիշապազանց այսինքն՝ Մարաց, գործելոց 'ի  
 Հայս, 565 ամօք յառաջ քան զՔրիստոս սկսեալ՝  
 գայ իջանէ մինչև ց129 ամ տեառն, և պարունակէ  
 յինքեան զշրջան ժամանակի իբրև եօթն հարիւր  
 ամաց: Աստի հետեւեցուցանել կարէ ընթերցողն  
 և զընդարձակութիւն Արգոյն, որում բազմամասն  
 պարտ էր լինել նմա՝ հանգոյն պատմական բանաս-  
 տեղծութեանց Մրեւելեան ազգաց՝ մանաւանդ Պար-  
 սից Մատենին (Թագաւորաց: Քանզի արդարև պատ-  
 մութիւն անցից՝ յընթացս եօթն դարուց եղելոց 'ի

Հայաստան, ուր բողոքած գործի արտաբերան գործի գործ  
 ծեռ, անհնարին իմն էր ամփոփել 'ի սակաւամասն  
 և 'ի կցկտուր երգս ինչ: Այլ եթէ այս այսպէս,  
 ապա ուրեմն ոչ միանգամայն հեռի 'ի ճշմարտու  
 թեանց ցուցցուք զանձինս ասելու, եթէ արդարեւ  
 ոչ միայն առանձին երգք գոյին առ նախնիս մեր՝  
 յայլևայլ դէպս ասացեալք, այլ նաև անընդհատ և  
 շարունակաբար վիպասանութիւնք երևելի գործոց,  
 որպէս 'ի բերեալ հատուածիդ նկատեմք:

Այլն էին տեսակք ազգային պատմական երգոց,  
 յորոց ոմանք սոսկ երգ վերաբերեալ, իսկ այլք՝ երգ  
 ընդհանր (19) կոչեին: Յետինքս այսոքիկ՝ որպէս  
 անուանակոչութիւն իսկ նոցին ցուցանէ, թերևս  
 կարգի ժամանակագրութեան հետեւին, այն ինչ  
 առաջինքն երևակայութեան և եթ գնային զհետ:

Օ այս որոշումն Արգոյն վիպասանաց յերկուս  
 ազգս Աորեւացին ինքնին ցուցանէ: Ասկ մեք յաւել  
 ցուք առ այս և զերբորդ յարկաբերան նորին՝ այն է,  
 արտաբերաններն կամ արտաբերաններն լինելն նորա՝  
 մանաւանդ 'ի սկզբան անդ. որ և ապացուցանի բա  
 նիւք Վերթողահորն 'ի համառօտիւ հաղորդելն մեզ  
 'ի Պատմութեան իւրում զսկիզբն Վաղդէական մա

(19) Ամեն (Ս) արտաբերան բողոքած զլեւհամ զլեւհամ, զլեւհամ  
 բողոքած լեւհամ երգոց իմանալ համին. որ զէ այդպէս, բողոք  
 զէ երգոց հարկաբերան արտաբերաններն լեւհամ Այս  
 բողոք ոչ այլ ինչ ցողանէ բողոք երգ զլեւհամ (Ս) արտաբերան  
 հարկաբերան:

տենին՝ ոգեալ բանաստեղծական ոգւով. »Վ՛հեղք  
 և երևելիք առաջինքն՝ ՚ի դիցն, և աշխարհի մեծա-  
 մեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և  
 բազմամարդութեան: Այլ ՚ի սոցանէ հատեալ գտան  
 ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և  
 վիթխարիք, որք յղացեալք ամբարտաւանութեամբ՝  
 ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեան,  
 և ՚ի նոյն լինէին գործ անկեալք. յոր հողմ՝ ահա-  
 գին իմն և աստուածային շնչեցեալ ՚ի դիցն ցաս-  
 անէ՝ ցրէ զամբարտակն. և մարդկանն անլուր բար-  
 բառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, ազմուկ շփոթի  
 ՚ի մէջ արկանէին: Յորոց մի էր և յապետոսթեանն  
 հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովաձիգ և  
 հաստաղէղն <sup>(20)</sup>:«

Օ երգքս զայսոսիկ՝ որպէս ՚ի վեր անդր հարե-  
 ւանցի ասացաք, առ հնագոյն յազգային վիպասանութեաց  
 ունել պարտ է, որք ՚ի մատեանս և յարքունի դի-  
 ւանս ևեթ պահպանեալ մնացին և ՚ի վեցերորդ  
 դարու ոչ ևս լինէին լսելի ՚ի շրթունս ազգի մե-  
 լոյ և երգչացն Վողթան:

Օ հնագոյն վիպասանութեանցս դան զկնի այլ ևս  
 բազում մասունք Նրգոյն, զորս ոչ աւելորդ հա-  
 մարիմք՝ ըստ տեսութեան մերում, յերիս ազգս բա-  
 ժանել: Այլ առաջինն դասեցուք զայնոսիկ, յորս  
 վիպասանք զարութիւնս և զգործս մերոց քաջաց,  
 թագաւորաց և զօրավարաց պատմեն. առ երկրորդն՝

(20) Խորէն. Գեղ. Կ. Գ. Թ:

յորս զՄարաց կամ զՊարսից են բանք. իսկ առ  
Էրրորդին՝ յորս զՆորեւստանեայց աւանդութիւնք տե-  
սանին:

Նուաճն հարցուք զառաջնոց և ըստ յաջորդու-  
թեանց իրացն եղելոց և զերգօղ զնոցանէ քննեսցուք:

Ն սոսին զառաջին տեղի ունին վէպք զՏիգրա-  
նայ, որ 'ի 565 ամի նախ քան զՔրիստոս յաթու-  
թագաւորութեան հայոց բազմեալ և զգրացի ազինս  
նուաճեալ՝ ընդարձակէ զտէրութիւն իւր՝ ընդ ձե-  
ռամբ գրաւելով զնախկին սահմանս մեր: Աւ ոչ  
զայս միայն, այլ և զՅոյնս անգամ հարկատուս կա-  
ցուցանէ, զկնի որոյ բարեկարգութեան աշխարհիս  
հոգ մեծ տանի: Վնայ ապա 'ի վերայ Մ. Ժդահակայ՝  
թագաւորին Մարաց՝ աջակցութեամբ Աիւրոսի.  
յաղթական հանդիսանայ 'ի մարտին՝ սպանանելով  
զարքայն Մեդացւոց և զտուն նորա հանգերձ բազ-  
մաթիւ գերեօք խաղացուցեալ առ ստորոտով Մա-  
սեաց և առ Արասիս գետով բնակեցուցանէ:

Յառաջբերեալն աստ համառօտութիւն բանից  
զՏիգրանայ՝ ամենեին տարբերի 'ի Յունական աւան-  
դութենէն, որ յաղագս Աիւրոսի, Մ. Ժդահակայ և  
Տիգրանայ: Արորոտոս՝ զհետ գնալով աւանդու-  
թեան Պարսից 'ի պատմելն զգործս Աիւրոսի, զայս  
ինչ յարէ. »Քաջ գիտեմ, եթէ գոն այլ եւ երե-  
կործե՛ր զարքայէս (21): « Մառաջին կարծիք իւրն է.

(21) Արորոտոս. գերեւ. համ. 95:

Երկրորդն Վսեհոփոնտայ (<sup>22</sup>). Երրորդն Կտեսիա-  
սայ (<sup>23</sup>): Այն անձանօթ բանասիրաց մեծագոյնն այն  
տարածայնութիւն, որ 'ի բանս երից պատմաբանիցդ,  
զոր և չէ տեղւոյս մանրամասն քննել: Ասասցուք  
միայն, եթէ ոք իմանալ կամեսցի զԵրրորդ Կտեսի  
զարքայէն Վարսից՝ ոչ այլ ուրեք բայց եթէ յա-  
ւանդութիւնս Հայոց պարտ լինի նմա խնդրել, և  
այն յերգս վիպասանաց: Վանդի զոր ինչ սոքա ասե-  
ին զԱիւրոսէ՝ մեծաւ մասամբ զանազանի յասից: Յոյն  
մատենագրաց, որոց բանք սաստիկս կուռին ընդ մի-  
մեանս և չբերեն ամենեին նմանութիւն իրերաց: Յե-  
րից հռչակաւոր պատմաբանից: Յունաց՝ Վսեհոփոնտ  
միայն մանր յիշէ զպատերազմն Աիւրոսի ընդ Տիգ-  
րանայ, որ և նուաճեալ յարքայէն Վարսից՝ հնա-  
զանդի, դաշնակից և հարկատու կացեալ նմա: Աի-  
պասանաց մերոց աւանդութիւն զհակառակն ցուցանէ.  
յորում զարքայն Հայոց իբրև զմի 'ի հզօր տիեզե-  
րակալաց Ասիոյ տեսանեմք, որ ոչ միայն ոչ յաղ-  
թի 'ի Աիւրոսէ, այլ դաշնակից ունելու զնա՝ ըզ-  
Մարացն խորտակէ զօրութիւն, սպանանէ 'ի մար-  
տին զԱժդահակ, զորոյ և զտուն հանդերձ գերեօք  
աւելի քան զբիւր մի՝ ածեալ բնակեցուցանէ 'ի  
Հայս: Հանգամանքս այս յետին՝ այն է, զաղթն  
Մարաց յաշխարհ մեր, տայ մեզ իմաստասիրել  
զճշմարտութիւն և զստուգութիւն աւանդութեան

(<sup>22</sup>) Վսեհոփոնտ 'ի Վաստատելուն Աիւրոսի, գերեւ է և զ:

(<sup>23</sup>) Աիւրոսի տու Վսեհոփոնտ 'ի նորին Տասնհարկայնի:

Հայոց, զոր ըստ կարծեաց մերոց նախամեծար դա-  
 սել պարտ է քան զՅունացն: Քանզի դրացի և  
 մերձակայ գոլով Պարսից՝ ապաքէն մերոցն էր օրէն  
 ստուգիւ գիտել զպատմութիւն Աիւրոսի և Մ. Ժ դա-  
 հակայ, քան թէ Յունաց, յորոց 'ի խօսս չիք և ոչ  
 միաբանութիւն ինչ, որով հնար լինէր զաւանդու-  
 թիւն վիպասանաց մերոց հերքել: Օայս խնդիր  
 պատմաբանական այլուր պարտ է լուծանել և ոչ  
 յայսմ վայրի: յոյր սակս դարձցուք 'ի կարգ քննու-  
 թեանս, և ասացուք եթէ այսօրինակ սխրագործու-  
 թեանց թագաւորին Հայոց պարտ էր արդարև զե-  
 րևակայութիւն ազգիս բորբոքել, որ և եղև իսկ.  
 քանզի ոչ յապաղեցին Արգիշք 'ի վիպասանութիւնս  
 իւրեանց մոլծանելով զարուժիւնս Տիգրանայ՝ յա-  
 ւերժացուցանել զայնս: Օբովանդակութիւն եր-  
 գոցս պատմելով՝ այսպէս 'ի մէջ բերէ Այորենա-  
 ցին զքանի մի խօսս 'ի նոցանէ. »Օայս և որ այլ  
 այսպիսիք բազումք, եբեր մերոյ աշխարհիս խարու-  
 եաշս այս և աղէբեկ ծայրիւ հերաց Արուանդեանս  
 Տիգրան. երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն  
 և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պար-  
 կեշտն 'ի կերակուրս և յըմպելիս և 'ի խրախճա-  
 նութիւնս օրինաւոր:« զորմէ ասէին 'ի հինսն մեր  
 որք բամբուամբն երգէին, »լինել սմա և 'ի ցան-  
 կութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստն և պերճա-  
 բան և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի...  
 Մ. Ժ դարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յա-  
 մենայնի, զամենայն ուրուք կենցաղ՝ մտացն լծակաւ



զսա, և դրացի Ս իրք արձան կանգնեալ նմա՝ զո-  
հիւք պաշտէին <sup>(27)</sup>:

Նախագաղափար գոլով քաջութեան, որպէս և  
նմանիք նորին շերակլէսք, 'ի պաշտպանութիւն  
մաղթէին զնա շայք հաւասարապէս ընդ Արամազ-  
դայ և տիկնոջն Անահտայ <sup>(28)</sup>: Ալ չէ սա՝ որպէս  
կարծիք եղեն ոմանց, նոյն ինքն շերակլն Յունաց-  
այլ սեպհական, բնիկ և մին 'ի գլխաւոր դից հնոյն  
Շայաստանի, որ սիրելի էր յոյժ և պաշտելի առ  
նախնիս մեր: 'Ա սակս մեծամեծ բարերարութեանց  
իւրոց առ ազգս և մաքրելոյ զերկիրս 'ի գազանաց՝  
Վեշապատող <sup>(29)</sup> համբաւեցաւ առ կենդանութեամբ  
իւրով: Օ կնի մահուան մեհեան կառուցին սմա 'ի  
Տարօն, ուր նորին իսկ որդիք պաշտօնեայ կացին  
նմին <sup>(30)</sup>: Այս մեհեան մեծագանձ յաշտից տեղի էր  
Թագաւորաց մերոց և Սահեվահեան անուամբ հըռ-  
չակեալ <sup>(31)</sup>: Թառի ինձ, թէ կին էր սորա՝ ըստ  
դիւցաբանութեան, Աստղիկ քանզի 'ի նմին իսկ 'ի  
Տարօն գաւառի՝ բաց 'ի մեհենէն ահէճօր, ահէ-  
հապ, ահէճէն <sup>(32)</sup> դիցն, գոյր և երրորդ մեհեան

<sup>(27)</sup> Խորէն. գեոր Կ. գլ. Ը:

<sup>(28)</sup> Ագառ. Ս. Էնէպէէ, 1835. էր. 102:

<sup>(29)</sup> Աոյն. էր. 602--3:

<sup>(30)</sup> Խորէն. գեոր Բ. գլ. Ը:

<sup>(31)</sup> Ագառ. էր. 602:

<sup>(32)</sup> Սահանտանի Անահտայ առ Ագառանգէղառի:

Աստղկան, զոր «էնէաչ Ալմազնի կոչէին. սենեակ՝  
զոր ես որոհապան իմանամ»<sup>(55)</sup>:

Մարտ սորա ընդ վիշապաց, անցք ընդ երկինս,  
գողանալն զյարդ Ռարշամայ<sup>(54)</sup>, որ արեգակն է  
Ասորոց, ասլաքէն արեգակնատիպ հսկայ պատկե-  
րացուցանել ունէին զսա յերևակայութեան հայոց:  
Գողով սորա բնիկ դիւցազն աշխարհիս՝ քան զբա-  
զումս յեկամոնտ աստուածոց սիրելի էր յաչս մերոցն,  
որոց 'ի տես մեծամեծ գործոց նորա՝ մոռացեալ  
զմարդկօրէն ծնունդն, զերկին, զերկիր և զծով 'ի  
ցաւոց երկանց կալեալ համբաւէին, և 'ի բոցոյ իբ-  
րև յանօսր և 'ի մաքրադոյն տարրէ ծնանել ասէին  
մանկան: Յոյր սակս և աուն հրաշալոյ ծնունդ հրա-  
շալի 'ի վիպասանաց կեղծեալ այսպէս քարոզիւր.

»Արեհէր երէն և երէր.

Արեհէր և ծերանի ծով:

Արէն 'ի ծովուն ունէր

Ալմազնի եղեգնիէն.

'նդ եղեգանի իող՝ ծովս ելանէր.

'նդ եղեգանի իող բոց ելանէր.

Ա- 'ի բոցոյն պարանէնէն

Ալպէր. նա հո-ր հէր ունէր.

Ալպէր բոց ունէր Տօրուն,

Ալկունիէն էն ալեգանիւնի:«

<sup>(55)</sup> Ագառ. էր. 602:

<sup>(54)</sup> Ռար Շէճէ 'ի լեզու- Ասորոց Ուրեի ալեգանի  
նշանակէ:

» Օ այս երգելով ոմանց բամբուամբ՝ լուաք իսկ  
ականջօք մերովք <sup>(55)</sup> « յաւելու խորենացին:

Եւ յինչ հարիւր յիսուն ամօք նախ քան զՔրիստոս  
յաթու թագաւորութեան բազմեցաւ Աղարշակ,  
զկնի կարգաւորելոյ զաշխարհս նորանոր կանոնադրութեամբք՝  
զմէն մի՛ ՚ի նահապետութեանց և նախարարութեանց նշանակեաց,  
իւրաքանչիւրոցն ճշդիւ սահմանելով զպաշտօն: Եւ սոցին կարգի եր  
և թուն հայկակայ՝ Տորք անուն, այր խոժոռագէղ,  
բարձր, հոգիարանչն, աստուծոյ և գիտահայեաց, զոր կու  
սակալ Երեմիոց հաստատեաց՝ զանուն ազգին Եւ  
գեղ տուն կոչելով: Եւ լուր սաստիկ ուժեղութեան  
և ՚ի տես սոսկավիթխար տարազու մարմնոյ նորա՝  
բորբոքեցաւ երեակայութիւն վիպասանաց աշխարհիս  
հայոց, որք և ախորժեցան յերգս իւրեանց ըզ  
նորին գործոց նկարագիր պատկերացուցանել: Եւ Քան  
զի՛ ըստ խորենացւոյ, երգէին նմա բուն հարկա  
նել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեղու  
թիւն, և ձեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և քե  
րել ըզընգամբք և կազմել որպէս տախտակ, և գրել  
նոյնպէս ըզընգամբք իւրովք արծուիս և այլս այս  
պիսիս <sup>(56)</sup>: « Յիրաւի է սքանչանալն ծերունւոյն խո  
րենայ ՚ի լուր բանիցս, յորս արդարեւ Տորք անցա  
նէ զանցանէ ուժեղութեամբ և՛ զհերակլեաւ և՛  
զՍամսոնիւ և զԱռստոմաւ: Եւ զի չէ՛ այս մուրա

<sup>(55)</sup> Խորեն. գեղ. ա. գլ. լա:

<sup>(56)</sup> Եւր. անգ:

ցածոյ, կցկտուր աւանդու[թիւն ինչ՝ 'ի փոխ առեալ  
'ի դրացի ազգաց և կամ յօտարէն մուծեալ 'ի մեր  
աշխարհ՝ յայտ է 'ի ճշդութենէ անտի հանգամա-  
նաց նկարագրութեանն, յորս զմերս տեսանեմք Հայ-  
աստան լեռնային՝ հայրենիք արծուեաց, զորս և  
Տորք ըղընգամբք գրէր յորձաքար 'ի վէմն նորին:

Իայց որ առաւել զարմացման է արժանի՝ միւս  
երգն է վիպասանաց, որ ասէ, [թէ »Յեզերս ծովուն  
Պոնտոսի դիպեալ նաւաց [թշնամեաց՝ դիմէ 'ի վե-  
րայ. և 'ի խաղալն նոցա 'ի խորն իբրև ասպարէզս  
ու[թ՝ և սա ոչ ժամանեաց նոցա. առնու վէմն բըլ-  
րաձևս և ձգէ զկնի. և 'ի սաստիկ պատառմանէ  
ջուրցն՝ ընկղմին նաւք ոչ սակաւք. և ամբարձումն  
ալեացն, որ 'ի պատառմանէ ջուրցն՝ վարէ զմնա-  
ցեալ նաւն բազում մղոնս (37):«

Այլ [թէ չէին զՏորքայ ասացեալ բանքս, որ յա-  
ւուրս Աղարշակայ եկաց ըստ պատմաբանին, այն է՝  
հարիւր յիսուն ամօք ևեթ նախ քան զՔրիստոս,  
ոչ դանդաղէի ապաքէն Հոմերին Աիկղոպայ Պոլի-  
փեմեայ, զոր Ադիսն կուրացոյց, նախահայր նախա-  
տիպ զհայկազն Տորք քարոզել: Քանզի ամենեին  
համաձայն են պատմելոցն յԱդիսականին ոչ միայն ա-  
րարք սորա, այլև նոյն իսկ ծովն և ժայռքն մեծա-  
մեծք, զորս երկոքին հսկայքն ձգեն՝ Հայն զկնի նա-  
ւացն [թշնամեաց, վիրագն Հոմերի զկնի նաւու ան-  
ձին [թշնամւոյ: Այլ ե[թէ յաւելցես առ այս և զնկա-

(37) Խորեն. գեոգ. Գ. 42 լն:



նախնի դարս 'ի սրտիւ հայկազն հսկայի ուրումն, զոր  
 զինի 'ի համար Տորքայ յարմարեցին Արգիւք: Քան  
 զի և՛ ոճ երգոյն և՛ նոյն իսկ աւանդութիւնն 'ի հառ  
 թիւն նորին տան մեզ ակնարկել: Սակայն լուծումն  
 կարծեացս ոչ այլ իւրք բայց եթէ 'ի ձեռն մտա  
 դիր հետազօտութեան հազոյն գրչագիր մասեւից,  
 գուցէ ընդ փոշուլ ծածկելոց յանկեան ուրեք Հայ  
 աստան աշխարհի, վճարեացի:

Այլ մեք յառաջ մղեացուք զհետազօտութիւն մեր  
 և յառեացուք զուշ մտաց մերոց 'ի հատուածս եր  
 գոցս այսոցիկ, որոց շարունակութիւն այսուհետեւ ակ  
 ներե հանդիսանայ 'ի Պատմութեան քերթողահօրն:  
 Քանզի զինի մահուան Արուանդայ, (որոց ճնունդ և  
 սնունդ նոյնպէս 'ի շրջոցս<sup>(30)</sup> առեալ թուի առ  
 Կորեւացւոյ), Սմբատ զինի ամբառնալոյ յաթոս թա  
 գաւորութեան զՆ. րտաշէս, զհետ լինի Արուազայ՝  
 եղբօր Արուանդայ, 'ի Նազարան եղելոյ, զոր և կա  
 լեալ գետասոյղ կորուսանէ: Օ՛ ծառայս սորա ան  
 ձինս իբրև հինգ հարիւր, զորս սարգևէ նմա ար  
 քայ, բնակեցուցանէ 'ի թիկանց Մասեաց. իսկ ըզ  
 գանձս նորա հրամանաւ Ն. րտաշիսի տարեալ 'ի Պար  
 սրա՝ Վարեհի ընծայէ<sup>(40)</sup>: Օ՛ կնի այսորիկ հրա  
 մանաւ արքայի երթայ Ռ. լանս յօգնութիւն եղբօր  
 Սաթիւհան, զոր յետ մահուան հօր նորա՝ այլ ոմն  
 բռնացեալ հալածէր: Հարածական արարեալ զբռնա

(<sup>30</sup>) Կորեւ. գեոտ Բ. գւ լի:

(<sup>40</sup>) Նոյն. գեոտ Բ. գւ իւր:

ւորն՝ դարձուցանէ Վաթիսկան զիշխանութիւն. զերկիր թշնամեացն աւերէ, և զնոսին ինքեանս՝ ի դերութիւն ածեալ Ղարտաշատ բնակեցուցանէ ՚ի Շաւարշական գաւառի: Յերգս վիպասանաց երգեալ տեսանին այսոքիկ գործք մեծի զօրավարին հայոց, որ սիրելի էր յաջ ազգի մերոյ, որոյ և զեղեցիկ նկարագիր անձին յերգոց անտի առեալ՝ ՚ի մէջ բերէ Նորեմացին այսպէս. »Աւերաս հասակ անդամոց համեմատ քաջութեանն. և առաքինութեան ոգւոցն որսորդ. և զեղեցիութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչն՝ որպէս դրակոնտիկոն ՚ի վերայ ոսկւոյ և ՚ի մէջ մարգարտոյ ծագէր. և ՚ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի. և տուչութիւն յաջողուածոց ունէր ՚ի մարտս առաւել քան զամենայն ոք <sup>(41)</sup>»:

Նայն իսկ յերգս թուելեաց զոյգ ընդ քաջութեանց զօրավարին և զգործս Ղարտաշիսի հուշակէին: Վանգի սրտովին զնմանէ շինել զքաղաքն Ղարտաշատ, կանգնել ՚ի նմս մեհեան, բերել ՚ի Վազարանէ զհայրենի կուռս <sup>(42)</sup>, զկնի որոյ և զյարձակումն Ղլանաց յաշխարհս մեր, սրատերազմն ընդ նոցա, տեղի տալն Ղլանաց առաջի զօրաց մերոց, անցանելն ընդ Վուր և բնակիլն յայնկոյս գետոյն:

Ղլ մեք բերցուք աստ զբանս Նորեմացւոյ, որոյ

(41) Նայն. գեո՛ր ք. գւ. ծք:

(42) Նայն. գեո՛ր ք. գւ. խճ:

քաղեալ յերգոց վիպասանաց՝ այսպէս պատմէ զի-  
րացն եղելոց. »Օ որդի Մլանաց արքային ձերբա-  
կալ արարեալ զօրացն հայոց՝ ածեն առ Մրտաշէս.  
զխաղաղութիւն խնդրէր արքայն Մլանաց՝ տալ Մր-  
տաշիսի զինչ և խնդրեսցէ. և երդմունս և դաշինս  
ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի ևս  
մանկունք Մլանաց ասպատակաւ հինից ելցեն յաշ-  
խարհն հայոց: Ալ 'ի չառնուլ յանձն Մրտաշիսի  
առ 'ի տալ զպատանին, գայ քոյր պատանւոյն յափն  
գետոյն 'ի դարաւանդ մի մեծ, և 'ի ձեռն թարգ-  
մանչաց ձայնէ 'ի բանակն Մրտաշիսի. »Քեզ ասեմ,  
այր քաջ Մրտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին  
Մլանաց, եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Մլանաց՝  
տալ զպատանիդ. զի վասն միոյ քինու ոչ է օրէն  
դիւցազանց զայլոց դիւցազանց զարմից բառնալ ըղ-  
կենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և 'ի  
ստրկաց կարգի պահել, և թշնամութիւն յաւիտե-  
նական 'ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստա-  
տել: «

»Ալ լուեալ Մրտաշիսի զայսպիսի իմաստուն բանս՝  
զնաց յեզր գետոյն. և տեսեալ զկոյսն գեղեցիկ և  
լուեալ 'ի նմանէ քանս իմաստութեան, ցանկացաւ  
կուսին: Ալ կոչեցեալ զդայեակն իւր Սմբատ՝ յայտ-  
նէ նմա զկամս սրտի իւրոյ՝ առնուլ զօրիորդն 'ի կնու-  
թիւն իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ  
ազգի քաջացն և զպատանին արձակել 'ի խաղաղու-  
թիւն:

»Ալ ասէ արքայն Մլանաց. « Ալ ուստի՞ տացէ

Քաջն Արտաշէս հազարս 'ի հազարաց և բիւրս 'ի  
բիւրոց ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս Աւանաց։

Յաւելու խորենացին՝ որպէս սովոր է նա առնել  
'ի բերելն զբանս երգչաց, թէ »զայս տեղի առաս-  
պելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն։

»Հեծաւ արե արտայն Արտաշէս

'ի «եաւըն գեղեցեկ։

Եւ հանեալ զտակնօղ

Շէտտակն պարանն։

Եւ անցեալ որպէս զարծաւ

Սըրաբն՝ ընդ գեպն,

Եւ ճեգեալ զտակնօղ

Շէտտակն պարանն՝

Ընկէց 'ի Տեղ+

Օրեորդին Աւանաց։

Եւ շատ ցաւեցոյց

Օ՞Տեղ+ խտակն օրեորդին՝

Արագ հասուցեալ

'ի բանակն եւր։

»Վոյնպէս զհարսանեացն առասպելեալ երգէին։

«Տեղ տակն արեղայր 'ի խեղայրաւեան Արտաշէսի։

Տեղայր Տարգարետ 'ի հարսնաւեան Սըրաբնի։»

»Քանզի՝ 'ի վերայ բերէ խորենացին, »սովորու-  
թիւն իսկ էր թագաւորացն մերոց՝ փեսայութեամբ

'ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղել  
 իբրև զհեղատեանն հուլմնայեցւոց. սապէս և [Թա-  
 գուհեացն յառազաստին՝ մարգարիտ (<sup>45</sup>):

[Թէ և սկի և ճարգարեք կոխելով եմնւտ Սաթինիկ  
 'ի տաճար Արտաշիսի և եղև առաջին 'ի կանայս  
 նորա, այլ որպէս 'ի բանից վիպասանաց երևի՝ ոչ  
 անխուով վայելեաց զիւր զբարեբաստիկ կեանս:  
 Քանզի բորբոքեցաւ 'ի սէր Արգաւանայ՝ գուցէ և  
 վիշապազանց իսկ (<sup>44</sup>): Թերևս 'ի սակս այսորիկ և  
 մարտ խուլութեան յարուցեալ ընդդէմ սորա  
 Արտաշիսի՝ խորտակեաց զզօրութիւն նահապետին  
 ազգին Սուրացան՝ քաջին և իշխողին յոգնաթիւ  
 տիգաւորաց (<sup>45</sup>), « յորմէ 'ի սկզբան անդ մեծապէս  
 կասկածէր արքայն հայոց, մինչդեռ նա զկողմն ունէր

(<sup>45</sup>) Խորեն. գերտ Բ. գլ. Ծ: — Այն սովորութեան մինչ  
 ցարդ պահպանեալ քեանի 'ե մըն հայոց, 'ե Սորեն  
 ջրաղայ եղելոց: Քանզի սո սոսս 'ե վերադարձեալ  
 անդ իւրային յեկեղեցոց 'ե քան ընդ հարսին, երև  
 մեծաքանն էցէ, 'ե «եամ» քրան ընդատաջ էլանէն եր-  
 հաւտ յազգահանաց նոցա՝ անելով 'ե ճեռին «հաւաքեղ»  
 երհաւ» և քրամով, զորս և յերհաւց հողմանց ցանէն՝  
 մին զգլխով իւրային, եւն ման՝ զգլխով հարսին:

(<sup>44</sup>) »Այն Արգամ է՝ սկի Խորեն. որ յառաւորելին Ար-  
 գասանն անուանի: « Գերտ Բ. գլ. Ծա:

(<sup>45</sup>) »Ստեյն հասկածէին 'ե Սուրացանին Արգամայ,  
 զի այս քաջ էր և բազմաց քէր քիգատորաց: « Գերտ  
 Բ. գլ. խղ:

Արուանդայ: Այս Արգաւան զերկրորդական ունէր զգահ յաշխարհիս մերում, և ընկալեալ էր յարքայէն՝ պահ յառնառնապ, գեղա յերկրոն յառնառն, հորձեր զգեղա իոյ տարին, արգաւ տնէ և պարտաւորապ և զերտառնառն ընդէլոյ տնէդէն նորագոտ (<sup>46</sup>): Այսպէս ահա տրփանք Սաթինկան եղէն պատճառք թերևս ան պայազատ առնելոյ զարմին Արգամայ (<sup>47</sup>): Քանզի որպէս երգէին վիպասանք, հրաւիրեցաւ յաւուր միում Արտաշէս 'ի ճաշ յԱրգաւանայ հանդերձ որդւովք իւրովք: որոց կասկածելով եթէ դաւել խորհեցաւ տանուտէրն ազգին Սուրացան՝ ապշոպ յարուցին և անդէն 'ի հացին իսկ զալինսն Արգամայ քարշեցին: Աստի ելեալ արքայի յոգի խուվեալ՝ դառնայ յԱրտաշատ, և զՍաթան՝ զորդի իւր մեծաւ զօրութեամբ առաքէ ընդդէմ ազգին Սուրացան՝ պատուիրելով զբազումսն 'ի նոցանէ սպանանել և զապարանս Արգամայ 'ի հուր այրել (<sup>48</sup>):

Այսպէս նկուն արարեալ զզօրութիւն Սարաց՝ առ ստորոտով Սասեաց բնակելոց, գուռզացաւ Արտաշէս և ոչ ևս կամեցաւ հարկել հաւովմայ յեցւոց: Սմին իրի և 'Նոմետիանոս կայսր՝ զօրաժողով լեալ ընդդէմ նորա՝ գայ 'ի հայս, ուր 'ի հովտին Սասենայ հանդիպեալ միմեանց երկոցունց զօրաց, յաղթական հանդիսանայ կողմն հայոց: 'Ն սմին պատերազմի արիութեամբ քաջացաւ Սմբատ, որ թէ և

(<sup>46</sup>) Խորէն. գեղա Բ. գլ. խէ:

(<sup>47-48</sup>) Առն. գեղա Բ. գլ. ճա:

»Ծերագոյն էր, ասէ Սորենացին, այլ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն <sup>(49)</sup>։ « Հանգոյն այլոց մեծամեծ գործոց և այս յաղթուիւն զօրաց մերոց էանց յերգս վիպասանաց, որք՝ ըստ նորին իսկ Սորենացւոյ, զայս կամելով երգել յառասպելն՝ Վոմետ զոմն ասէն եկեալ <sup>(50)</sup>, որ է ինքն կայսրն Վոմետիանոս. ոչ եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով՝ յանուն նորա կոչէն։ «

Վազում այլ ևս մեծամեծ գործս գործեալ պատմի 'ի սմանէ 'ի մասին բարեկարգութեան, յորս թուի ինձ նոյնպէս լսել զոգի նախնի երգչաց (թէև առանց յիշատակութեան անցանէ պատմաբանն զնոքօք), մանաւանդ 'ի ծղ և 'ի ծթ գլուխսն, զորս ուշադիր քննութեամբ ընթեռնուլ հրաւիրի ընթերցողն։

Սմա յաջորդեաց Վրտաւազդ՝ առաջին յորդիս Վրտաշիսի, այր խուլարար, անձնահաճ, խանդացող. որոյ կասկած 'ի սիրտ արքայի արկեալ՝ ընկենուլ ետ 'ի պատուոյ զտէրն Մուրացան՝ զՎրգամ, և ընկալաւ զգահ երկրորդական։ Աչ շատացեալ այսու՝ նախանձեցաւ և՛ ընդ մեծ սպարապետն Սմբատ, որ զկնի բազմեցուցանելոյ զարքայն Վարսից Վրտաշէս յաթու թագաւորութեան, նուաճելոյ զերկիրն Վասքից և ածելոյ անտի 'ի Հայս զբազմութիւն գե-

(49) Սոյն. գեր+ ք. գլ. ծղ.

(50) Սոյն. գեր+ և գլուխ։

րեաց՝ մեծաւ պատուով ընկալեալ եղև յարքայէն:  
 Յոյր սակս սպանանել խորհեցաւ զզօրավարն Հայոց  
 նախանձայոյզն Մրտաւազդ: Օչայս իմացեալ Սմբատայ  
 գնայ բնակի զկողմամբք Մսորեստանի՝ թողեալ  
 զիշխանութիւն զօրաց Հայոց, զոր արքայորդին  
 յինքն առնուլ ոչ յապաղէ: Այլև սմա յորս ելանել  
 յաւուր միում զկողմամբք Սասեաց. և այնինչ  
 յանդուգն արշաւեցուցանէր զերիվար իւր՝ անկաւ  
 'ի վիհ իմն և անհետացաւ զկնի երկեամ մի թա-  
 գաւորելոյ:

Սորա բնաւորութիւն անսանձ և մոլութիւն վարուց  
 և անչափ փառասիրութիւն անցին յերգս վիպասա-  
 նաց, որոց 'ի զարմանս կրթեալ ընդ չարասիրու-  
 թիւն Մրտաւազդայ՝ ոչ մարդ, այլ դև կարծեցին  
 զնա գոլ: Քանզի զճննդենէ սորա աւանդութիւն  
 էր զարմացման արժանիս պատմել գործս, կախար-  
 դեալ ասելով զսա 'ի կանանց զարմիցն Մթահա-  
 կայ, զոր երգիչք յերգս իւրեանց այլաբանելով  
 »վիշապազունք՝ ասէին, գողացան զմանուկն Մրտաւազդ  
 և դև փոխանակ եղին<sup>(81)</sup>: « Այլ արդարև գի եղև  
 սա 'ի տան հօր իւրոյ, խուովութիւն յարուցանելով  
 ընդ ամենայն աշխարհս մեր՝ դրդելով զարքայ  
 ընդդէմ նախարարացն մեծամեծաց, որք նախ քան  
 զնա՝ զհայրենեաց ունելով առաջի զօգուտ, միակամ  
 միահաւան զփառք տանս Հայոց գուն գործէին  
 ճոխացուցանել: Հրապուրեալ զհայր իւր՝ Մրտա-

(81) Խորեն. գեր. Բ. գլ. ԿՊ:

շէս, բառնալ ետ 'ի կենաց զծերունին Արգամ:  
 հալածական արար զԱմբատ. կոտորեալ բաժանել  
 ետ արքայի զսպարապետական իշխանութիւն զօրա-  
 վարին հայոց 'ի մէջ իւր և եղբարց իւրոց. և  
 այսպէս զփառաւորն զայն թագաւորութիւն Արտա-  
 շիսի, որ 'ի մեծամեծ յաղթութիւնս անցանէր՝  
 անշքացոյց պարտութեամբ, որով պարտեցաւ հայ-  
 աստան 'ի Տրայիանոսէ 'ի վերջին աւուրս սորա:  
 Աւ զինչ զարմանք, եթէ 'ի մահուան Արտաշիսի  
 ժողովուրդն՝ տեսանելով զկորուստ իւր մեծ, լա-  
 համարէր 'ի գերեզման իջանել ընդ սիրելի արքայի  
 իւրում, քանթէ վկայ լինել անարգանաց հայրե-  
 նեաց, յոր հասուցանել ունէր զնա Արտաւազդ: Աւ  
 հարձք և՛ սիրելի կանայք և՛ մտերիմ ծառայք և՛  
 անթիւ ամբոխ ժողովրդեան՝ սրով կատարէին զկեանս  
 իւրեանց զգերեզմանաւ: Արգիշք առաջի առնեն  
 զզարմացման արժանի մահունս զայսոսիկ, որք ա-  
 հաւորապէս ազդել ունէին յերեակայութիւն Արտա-  
 վազդայ, յորս սա զաւերումն իւրոյ թագաւորու-  
 թեան տեսանէր: Յոյր սակս խռովի յոգի իւր որդի  
 արքային հայոց, և որպէս վեպասանքն ասեն, որով  
 հետևեալ «'ի մահուան Արտաշիսի բազում կոտորածք  
 լինէին ըստ օրինի հեթանոսաց, դժուարի Ար-  
 տաւազդ ասելով ցհայրն. »Աինչ դու գնացեր և  
 զերկիրս ամենայն ընդ քեզ տարար. ես աւերակացս  
 որպէս թագաւորեմ:« Ասան որոյ անիծեալ զնա  
 Արտաշիսի՝ ասաց այսպէս. »Աթէ դու յորս հեծցիս  
 յազատ 'ի վեր 'ի Մասիս, զքեզ կալցին քաջք,

տարցին յազատ 'ի վեր 'ի Մասիս. անդ կացցես և զլոյս մի' տեսցես <sup>(52)</sup>։

Յայտոցիկ բանից արքային մեռելոյ նկատել կարեմք ոչ միայն զազգին անսիրելութիւն առ Մարտաւազդ, այլ և զհօրն ատելութիւն առ խռովարար որդին, յորոյ 'ի գլուխ զանէծս զայս արկանէ 'ի գերեզմանէ անտի. որ և կատարեցաւ իսկ։ Քանզի, որպէս յառաջագոյն ասացաք, յորտալն իւրում զկողմամբք Մասեաց կինձս՝ անկաւ 'ի խոր իմն մեծ. և ըստ հօրն բանին՝ կալան զնա քաջք, տարան յազատն 'ի վեր 'ի Մասիս, և անդ յայրի միում արգելին զնա՝ կապեալ երկաթի շղթայիւք։ Արկուլեթ շունք նորա հաւատարիմ գնացին զհետ տեառն իւրեանց. հանապազ կրծեն զշղթայսն առ 'ի ազատել զնա 'ի բանտէն <sup>(53)</sup>։ Իսկ նա անհամբեր մնայ կատարածի գործոյս, զի ելցէ և վախճան արասցէ աշխարհիս հայոց։

Աւայտպէս նորս այս Պառմեթես շղթայակապ անկեալ դնի 'ի վերայ Մասեաց լերին անմահ և յար 'ի կատաղութեան՝ որպէս և 'ի կենդանութեան

ցաւ ուսանել զկատարեալ չարութիւնն. և այսք անկարելիք նմա: Արպէս վերագոյնն ասացաք, սովորութիւն ունէր պատրանաց աղագաւ առ բազումն ոչինչ 'ի ծածուկ գործել. և այնպիսի վերջին և կատարեալ չարութիւն յայտնի ուսանել կարողութիւն ոչ էր. հնարի այսպիսում ուսման դառնութեան, և հնարս և ցաւս ինչ յորովայնի ունել և բազբաղել չարաչարս, որ ոչ այլով իւրիք քան թէ բանիւ իմն և անուամբ սոսկալեալ բժշկիցի, զոր ումեք վայրապար լսել ոչ է կարողութիւն: Այլ այս, որ զսովորեալ չարութիւն նիւթեր, ուսուցանէր նմա 'ի տան և 'ի հրապարակս, անկասկած զգլուխ 'ի վերայ ուսոց Վիւրասպեայ դնելով և խօսելով յականջն՝ ուսուցանէր զանբարի արուեստն:»

Հուսկ ուրեմն » զբոսորդն վերայայ 'ի վերայ ուսոց Վիւրասպայ « այսպէս մեկնաբանէ՝ 'ի բաց մերկեալ զզգեստ առասպելական 'ի ճշմարտութենէն, որ ընդ նովաւ ծածկի. » Նբաւ մարդիկ սկսաւ (Վիւրասպ) զոհել դիւաց՝ մինչև տաղտկանալ 'ի նմանէ բազմութեանն և հալածել, և փախչել նմա 'ի նախասացեալ վերին կողմանսն. և 'ի սաստիկ վարելոյն զնա՝ թօթափեցաւ ամբոխ նորա 'ի նմանէ: Հայս վստահացեալ վարողացն զնա՝ հանդեան աւուրս ինչ զտեղեօքն: Իսկ Վիւրասպեայ ժողովեալ զցըրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ 'ի վերայ, վնաս սաստիկ առնելով. այլ յաղթէ բազմութիւնն՝ և փախստական լինի Վիւրասպ: Այլ հասեալ սպանա-

և են զնա մերձ 'ի լեաուն , և ընկենուն 'ի վիճ մեծ  
ծծմբոյ <sup>(85)</sup> : և

Մյսպէս գլխաւորէ զբանս իւր Վերթողահայրն  
մեր , յորս ճշմարտապատմութիւն նորին , տեղեկու  
թիւն հնութեանց , ճշգութիւն նկարագրութեանց  
'ի զարմանս կրթեն զմեզ առաւել քան զյոյժ :  
{ Յինքենէ՞ արդեօք , եթէ յՎրէքսանդրացի իմաստա  
սիրաց առեալ՝ յառաջ բերէ Վորենացին զայս  
մեկնութիւն , չէ 'ի դիւրագունիցն վճռաբար որոշել .  
նա՞ բնաւ և չէ իսկ փոյթ ինչ :

Տեսանես , զի իմաստուն պատմաբանն մեր՝ ոչ եթէ  
վայր 'ի վերոյ առանց քննութեան մոլծանէ 'ի  
մատեան իւր զորմէ ճառէն . այլ զկնի ընդերկար  
որոճալոյ զայն 'ի մտի իւրում և զսուտն 'ի ճշմար  
տութենէ որոշելով՝ շօշափելի կացուցանէ զայն  
առաջի ընթերցողաց : Այլ եթէ նա զօտարաց զրոյցս  
և զաւանդութիւնս այսպէս քրքրէ , որքան ևս առաւել  
զմերն պարտ էր նմա՞ զվիպասանին ասացից զբան ,  
»Տասնից Թակու կընէ : Մյլ զայսմանէ յիւրում տեղ  
ւոջ լիով ճառեսցուք : Իսկ առ ժամն ոչ աւելորդ  
դատիմ հարեանցի բաղդատել զերգս մերոց վիպա  
սանաց ընդ Վարսիցն , և ցուցանել սակաւութ զյատ

(85) Վրանի արդարեւ հրաբուխ ըստ լինել լեաուն Վր  
Տաւնի , որ և ապացուցանի ծծմբովն , զոր գրանէն  
առ « արդարով նորին : Տէ՛» La Perse , par L. Dubeux ,  
էր . 27 :

կութիւնս նախնական վիպասանութեանց ազգացդ երկոցունց:

Ազի և ընդածին յատկութիւնք որևէ ազգի՝ մանաւանդ նախնականի, առաւելապէս յազգային նորայերգս տեսանի տպաւորեալ: Օ այս իմն նաև զՊարսից և զՀայոց: Քանզի 'ի քննել մեր ուշադրութեամբ զգրոյցս Նրեաց զառաջին թագաւորաց նոցա, նկատեմք 'ի նոսին զբերումն երևակայութեան և մտաց նոցա առ հրաշալին առաւել քան առ բնականն: Այլ այս ոչ միայն 'ի նկարագիրս արկածից, այլև յոլով անգամ յամբողջ պատմութիւնս հարիւրամէից և միջոցաց ժամանակի՝ մանաւանդ հրնագունին: Օ հաստատութիւն ասացելոցս նոյն իսկ վէպք Պարսից ցուցանեն մեզ բացերևակի: Քանզի որ ինչ 'ի նոսին պատմի զարքայիցն՝ Քայումուրսայ, Տէմշիդայ, Օռհակայ, Նֆրիդունայ և այլոց 'ի հարստութենէն Վեշդադեանց <sup>(86)</sup>, զառասպելական յինքեան պարունակէ զնշանակութիւն, և այն՝ վերաբերեալ ոչ առ որոշեալ անձինս յիշեալ առասպելեալ թագաւորացդ, այլ առ ողջոյն շրջանս ժամանակաց, յորոց յընթացս ազգն Նրեաց 'ի մասին քաղաքականութեան սակաւ առ սակաւ հնարեալ և սեպհականեալ է անձին զայլևայլ գիւտս առ 'ի լաւացուցանել զիւր վիճակ քաղաքական: Յաւել առ այս և զանհաւատալին զայն շրջան դարուց, յորս մէն մի 'ի նախկին թագաւորաց Պարսից տի-

(86) Տե՛ս Վեշդադե 'ի Մարտինի թագաւորաց:

րապետեն՝ Տ. Էմչիդ՝ զեօթնհարիւր ամ, ( ) ոհակ՝  
 զհազար, Մ. Քրիդուն՝ զհինգհարիւր և Մինուէհար,  
 զհարիւր քսան ամ: Վաջ կշուադատեալ 'ի մտի  
 զհանգամանսդ զայդոսիկ, ոչ անտեղի գտցես զմերս  
 կարծիք, այն ինքն է՝ եթէ զոր ինչ վիպասանք Պարսից  
 զառաջին թագաւորաց իւրեանց ճառեն, նա՝  
 և առաջին իսկ թագաւորք նոցին, բուն առասպելք  
 են, ընդ որովք ծածկի ճշմարտութիւն իրացն եղելոց,  
 յորս և մտադիր ընթերցողն որոշել կարէ զայլաբանականն  
 'ի բնականն, որպէս և խորենացին առնէ  
 'ի պարզաբանել իւրում զՎիւրասպի Մ. Ժգահակայ  
 զպատմութիւն: Այր առ հրաշալին, չափազանց թուիչ  
 հրաբորբոք երեւակայութեան, գեղապաճոյճ սեթեթեթ  
 սովորական արկածից, մանկական յափշտակութիւն  
 մտաց, որ զբնական իրս գերբնականաւն  
 իմանալ նկրտի, ահա քեզ յատկութիւնք, յորս  
 Պարսիկն անցանէ զանցանէ զամենայն արեւելեան  
 ազգօք: Այլ այս ոչ միայն 'ի նախնական դարուց  
 պատմութիւնս ազգին իւրոյ. այլև 'ի ճառելն զանցս  
 յետին ժամանակաց, որպէս տեսանել ունիս 'ի բանս  
 նոցա զՎ. դէքսանդրէ Մակեդովնացւոյ, խաբանդէր  
 առ նոսա կոչեցելոյ: Մ. յսպէս ահա թագաւորք Պարսից՝  
 մերկացեալ բնաւին զմարդկութիւն իւրեանց,  
 յանդիման լինին մեզ՝ զգեցեալ զկերպարանս մտաց  
 ցածին էակաց, կամ թէ լաւ ևս ասել՝ առասպելական  
 անձանց:

Սակայն ոչ է այդպէս պատմութիւն առաջին հայկազուն  
 թագաւորաց մերոց՝ թէ և 2107 ամօք նախ

քան զՔրիստոս սկզբնաւորեալ տեսանեմք զայն: Ա իսպասանք մեր կամ Արգիւք, որ զգործս նախահաւուն մերոյ Հայկայ և յաջորդաց նորուն ասել ատորժեցան յերգս իւրեանց, որպէս 'ի նշխարաց առ մեզ հասելոց 'ի Պատմութեան խորենացւոյ տեսանեմք, յորոց վերայ սա յետինս հիմնեալ կառուցանէ զազգաբանութիւն մեր — ապաքէն ոչ բերեն զնմանութիւն Պարսից վիսպասանաց: Այլ Բէշ դադեան արքայք առասպելք են միանգամայն, Հայկազունք մեր ընդհակառակն նախ առաջին մարդիկ են մեզ նման, որոց գործք նոցա ոչ ելանեն ըստ սահման բնական և սովորական գործոց մարդկան: Աւարդարև պատմութիւն նախնւոյն Հայկայ, որդւոց և թուանց նորա և այլոց՝ ոչ ինչ յինքեան պարունակեն յանհաւատալեացն. թէ և դուն ուրեք այն տեսանեմք և 'ի բանս մերոց վիսպասանաց զրոյցս առասպելախառնս: 'Ե բաց աւեալ զպատմութիւն Ահազնի (զոր յայլում վայրի մանր քննեսցուք), այլ ամենայն երգք վիսպասանաց մերոց մեծապէս յինքեանս բերեն զճշմարտութեան կերպարան:

Արկոբին ազգքս դրացիք՝ Հայն և Պարսիկն, տիրապէս զանազանին 'ի միմեանց: Արքան անսանձ է երևակայութիւն յետնոյն և սիրող հրաշալեաց, այնքան ճիշդ է ընդհակառակն մէն մի յըմբունմանց Հայոյն, որ քան զամենայն՝ նախամեծար դասէ զբնականն և զճշմարիտն: Օայսոսիկ յատկութիւնս ազգի մերոյ տեսանեմք մանաւանդ 'ի հնագոյն երգս վիսպասանաց մերոց. թողից ասել զճշմարտասիրու-

Թիւն հայ պատմաբանից, որք ոչ միայն զայլոց ա-  
զանց պատմութիւն անաչառ մտօք աւանդէն մեզ, այլ  
և մերոյ ազգիս գործք՝ թէ արժանի իցէ այն և  
թէ անարժան, աւանց սքօղելոյ՝ կամ յանչափն ձրկ-  
տեցուցանելոյ և կամ նուազեցուցանելոյ զլաւութիւն  
կամ զթերութիւն նորա, ճշդիւ պատկերացուցանեն  
զայն առաջի ընթերցողաց:

sic!

## Գ.

Ննցեալ աստի յեւրոսէ կարգ երգոց վիպասանաց,  
յորս զՆսորեստանեայց են բանք, տեսցուք և 'ի նո-  
սին զփոյթ հնոցն մերոց՝ յաւերժացուցանել զյիշա-  
տակ տիկնոջն Շամիրամայ, մեծամեծ շինութեանց  
եղելոյ պատճառ 'ի նահանգին Ասսպուրականի, որ  
և ընդ լծուլ Նսորոց արար զհայաստանեայս: 'Ի  
բաց թողեալ զճշմարիտ կամ զմտացածին լինելն  
պատմութեան Շամիրամայ և զլինելութիւն իսկ տիկ-  
նոջն, զորմէ այլևայլ կարծիք են առ բանասէրս  
Սերոպիոյ, 'ի մէջ բերցուք զարժանին ուշադրու-  
թեան իմաստուն հասխուղից զբանս Նսորենացւոյ,  
յորս աւանդի կարծիք զՇամիրամայ՝ տարբեր ամե-  
նեիմք 'ի Յոյն և հուովմայեցի մատենագրացն: Ար  
'ի սոցանէն պատմի զՇամիրամայ քաջայայտ է ամե-  
նեցուն. քանզի ծնունդ սորա և սնունդ, նստելն յա-  
թող թագաւորութեան զկնի մահուան առն իւրոյ  
'Աինոսի. գնալն ընդդէմ Վարաց. անցանելն յԱգիպ-  
տոս, ուր և հարցանելն զպատգամախօսն Վմնովնայ.

դարձ նորա Վսորիս զկնի պատերազմին Հնդկաց և  
յառնելն ընդդէմ նորա որդւոյ իւրոյ Վինուասայ.  
անհետ լինելն կամ ըստ առասպելաբանից՝ վերափո-  
խիլն 'ի կարգս աստուածոց, իսկ ըստ այլոց՝ յաղաւ-  
նի փոխակերպիլն նորա — այս ամենայն յայտնի է ծա-  
նօթիցն հնագոյն պատմութեան արևելեան ազգաց <sup>(87)</sup>,  
Բայց առաւել զարմանալին այն է, որ սոքա և ոչ  
մի ինչ պատմեն զգալոյն Շամիրամայ 'ի Հայս,  
զպատերազմէն նորա և զմեծամեծ շինութեանց, որոց  
հետք մինչ ցայսօր ժամանակի կան և մնան 'ի կող-  
մանս Վանայ: Ի՞նչ և սոցա անփոյթ է արարեալ  
զայսու ամենայնիւ, սակայն Վորենացին՝ զհետ գնա-  
լով քաղդէական աւանդութեանց և մանաւանդ եր-  
գոցն վիպասանաց աշխարհիս մերոյ, հաւանական դա-  
տի՝ զյունական և զհռովմէական պատմաբանիւք ան-  
ցեալ, տալ մեզ զպատմութիւն Շամիրամայ, որ  
բազմօք 'ի նոցանէն զանազանի: Քանզի Շամիրամ  
զկնի հալածական առնելոյ 'ի Արիտէ զՎինոս՝ պատ-  
գամաւորս առաքէ 'ի Հայս առ Վրայ՝ գալ առնուլ  
զնա կնութեան և թագաւորել 'ի վերայ Վսորես-  
տանեայց: Արում ոչ հաւանեալ արքային Հայոց,  
ելանէ գայ տիկինն 'ի Հայս ընդդէմ նորա զօրու-  
ծանու. և 'ի վինել պատերազմի՝ սպանանի Վրայ  
և երկիր տէրութեան նորա մտանէ ընդ լծով Վսո-  
րոց: Օկնի որոյ բուռն հարկանէ Շամիրամ զմե-  
ծամեծ շինութեանց. շինէ և ասարանս հոյակապս,

(87) Վեպոս. Աեէ. գեոթ Բ. հաճ. Դ — ինս:

յորում զամառնայինն եղանակ անցուցանել ախորժեք: Աւ որովհետեւ սա ամի ամի ելանէր 'ի Հայս, ամին իրի կողմնապետ Թողոյր Ասորեստանի զԱրացին Օրադաշտ, որոյ ընդհուպ բռնացեալ տիրել խորհեցաւ 'ի վերայ ամենայնի: Օչարեալ ընդայս Շամիրամայ՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ. սակայն ոչ կարացեալ զդէմ ունել Արացւոյն՝ փախստական անկանի 'ի Հայս, ուր հետամուտ եղեալ նմա՝ Նինուասայ, սպանանէ զմայրն և ինքն յաթու Թագաւորութեան բազմի: Օայսոսիկ Աորենացի <sup>(88)</sup>:

Ասրագործութեանց Շամիրամայ՝ 'ի Հայս գործելոց, պարտ էր մտանել յերգս վիպասանաց. քանզի վերոյիշեալ պատմութիւնն թէև Քերթողահայրն յաւաջբերեալ ասէ 'ի գիրս Վար Աբասայ 'ի քաղղէական մատենից, սակայն ըստ մերումն կարծեաց՝ չեն անխառն 'ի Հայ զըուցաց և աւանդութեանց: Վի՛ զի մատենագիրն մեր ինքնին վկայեայսմ հատուածովք՝ քաղելովք յերգոց վիպասանաց. և երկրորդ՝ զի որպէս Վար Աբաս խոստովան լինի՝ յիշեալն 'ի նմանէ քաղղէական մատեան պարունակէր յինքեան նաև զերգս գուսանականին <sup>(89)</sup> աշխարհին Հայոց: Օայս կարծիք վաւերական ցուցցէ քեզ պատմութիւն վախճանին Շամիրամայ, զոր Աորենացին 'ի վիպաց առեալ հաղորդէ մեզ այս

<sup>(88)</sup> Աորեն. գիրք Թ. գլ. ԺԵ, ԺԶ, ԺԷ:

<sup>(89)</sup> Նոյն. գիրք Թ. գլ. ԺԴ:

պէս. « Աստ ուրեմն ('ի հայս) զմահ ասել (երգչաց)  
 Շամիրամայ և զհետեակ փախուստն. և զպասքումն,  
 և զիղձ ջրոյն և զարբումն. այլև 'ի մօտ հասանել  
 սուսերաւորաց և պարտաւորն 'ի ծով, և բան 'ի  
 նմանէ — » Աւետի + Շամիրամայ 'ի ծով (90): «

» Աւետի + Շամիրամայ 'ի ծով. « ասա քեզ բան վի-  
 պասանին, որոյ անուն և նոյն իսկ Արգն՝ նման ու-  
 լանց տիկնոջն Ասորեստանի՝ յանդունդս ժամանակի  
 խորասոյզ անհետ եղեն վասն մեր . . .

» Աւետի + Շամիրամայ 'ի ծով. « Թուի ինձ մտացս  
 աչօք տեսանել զ'ի հնոցն մերոց ոգեալ նկարագիր  
 փախստեան Թագուհոյն մեծի, որոյ յանհնարս մտեալ՝  
 յոտիցն ԹեթևուԹիւն լինի ապաստան, և յանցանելն  
 ընդ խորշակահար ընդ դաշտս՝ պապակի լեզու նորա  
 'ի տապոյ. զովացուցանել ցանկայ զկոկորդն ջրովն  
 քաղցրութեան, որ կարկաջասահ անցանէ ընդ քա-  
 ըինս. և մինչ նա զծարաւն բժշկէր՝ մօտ եկեալ  
 հասանեն սուսերաւորք. սակայն ճեպ տայ ոտից իւ-  
 ըոց Թալկացելոց տիկինն՝ հասանէ յեզր ծովուն  
 Աւանայ, 'ի բաց կորզէ 'ի պարանոցէն զուլունս,  
 ընկենու զուլունս 'ի ծով, և ինքն իսկ ծովամայն  
 կարձել կամի զկեանս... այն ինչ յանկարծ... ով  
 սքանչելեացս... 'ի քար դաունայ յուսակտուրն Թա-  
 գուհի.

» Շամիրամ + որոտ զին + մն զՆեբէ (91): «

(90) Աւետի. գերտ ւ. գլ. ԺԷ.

(91) Աւետի. գերտ ւ. գլ. ԺԷ.

Մանդուխունս այս յաղագս բռնանալոյ Օրա-  
 դաշտի Մսորիս, պատերազմին ընդդէմ նորա Շա-  
 միրամայ և մահուան յետնոյս, ոչ միայն անմիաբան  
 է որոց Յոյնք և զինի նոցա հարկմայեցիք պատմեն  
 զտիկնոջէն մեծէ. այլև անծանօթ նոցա բոլորովին:  
 Օայս տարբերութիւն նոյնպէս նկատէ գիտնական  
 Վաղղիացին Ռէնոյ 'ի գեղեցիկ քննութեան իւրում  
 յաղագս Օրորաշտի, որ մեծաւ մտադիւրութեամբ  
 զննէ զայս խնդիր և զկարծիս իւր զՍորենացւոյն  
 յարգանօք յայտնէ <sup>(92)</sup>: Սակայն այս բուն պատմաբա-  
 նական խնդիր գոլով, ոչ մտանէ 'ի կարգ յառաջի-  
 կայ երկասիրութեանս. յոյր սակս և մեք զանց ա-  
 րասցուք զնովաւ մինչ յայլում վայրի առանձինն  
 զպատմութենէ Քերթողահօրն հասցէ մեզ ճառել:  
 Վասպէս արժանի է ուշադրութեան և՛ առաջին  
 մասն պատմութեան Շամիրամայ առ Սորենացւոյ,  
 զորմէ չիք ամենեւին յիշատակութիւն առ նախկին ա-  
 րևմտեան մատենագիրս, այն ինքն է՝ հրաշալի շի-  
 նութիւնք Թագուհւոյն Մսորեստանեայց 'ի կողմանս  
 Սանայ, նկարագրեալք առ մերովք ժամանակօք 'ի  
 Շուլց գիտնականէն <sup>(93)</sup>, և պատերազմն նորա ընդ

<sup>(92)</sup> J. Reynaud. — *Zoroastre*, § 2. «Nous venons de voir qu'indépen-  
 damment de Justin, elle (cette tradition) est consignée dans  
 Moïse de Khorène; et le témoignage de ce savant, qui avait  
 étudié et visité non seulement le monde grec et romain,  
 mais l'Orient, est d'un grand prix, lors même qu'on le  
 réduirait à n'être que l'écho des idées de son temps.»

<sup>(93)</sup> Տէ՛ Journal Asiatique, 1840, Avril, Mai, Juin.

դէմ Վրայի: Վրայ ամենայն յերգոց վիպասանաց  
 քաղեալ երևի և մոռեալ 'ի քաղղէացի մատեանն,  
 ուստի հանեալ է Վար Վրասայ զպատմութիւն  
 Հայոց: Վանդի թէև բազմօք յեղյեղեալ է վէպն  
 մեր՝ անցանելով նախ առաջին 'ի մատեանն քաղ-  
 դէացի, յետոյ հրամանաւ մեծին Վղէքսանդրի 'ի  
 յոյն լեզու փոխեալ, իսկ հուսկ ուրեմն հրամանաւ  
 Վաղարշակայ հանեալ անտի բազմահմուտ Վսոր-  
 ւոյն և 'ի նորոյ հայացուցեալ 'ի Վերթողահօրէն  
 մերմէ. սակայն ոչ միանգամայն անհետանայ 'ի նմին  
 ոգի և յատկութիւն հայ աւանդութեանն: Վտադիր  
 ընթերցանութիւն յետագայ հատուածիս ակներև  
 ցուցցէ զճշմարտութիւն բանից մերոց. քանզի ասէ  
 Աորենացի.

»Վայց վաւաշն այն և բորբորիտն Շամիրամ՝ 'ի  
 բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա (Վ-  
 րայի), ցանկայր հասանել... և 'ի ոչ հաւանել Վ-  
 րայի՝ 'ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ, զայ  
 հասանէ յերկիրն Հայոց 'ի վերայ Վրայի 'ի դաշտն  
 Վրայի, որ և յաճուն նորա անուանեալ Վրարատ:  
 Աւ 'ի լինել ճակատուն պատուէր տայ զօրապետաց  
 իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել  
 զՎրայն: Ասկ 'ի լինել մարտին՝ հարկանի զօրն  
 Վրայի, մեռանի Վրայ 'ի պատերազմին 'ի ման-  
 կանցն Շամիրամայ: Վիակապուտս առաքէ տիկինն  
 յետ յաղթութեանն 'ի տեղի ճակատուն՝ խնդրել 'ի  
 մէջ դիականցն անկեւոց զըղձալին իւր և զտարփա-  
 ծուն: Վտանեն զՎրայն մեռեալ 'ի մէջ քաջամա-

րտկացն. և հրամայէ դնել զնա 'ի վերնատանն ապարանից:

»Իսկ 'ի գրգռել միւսանդամ զօրացն Հայոց 'ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քինախնդիւր լինել մահուան Վրայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուէ զվերս նորա, և կենդանասցի:» Միանգամայն և ակն ունէր դիւթու թեամբ վհուլթեան իւրոյ կենդանացուցանել զՎրայ՝ ցնորեալ 'ի տուփական ցանկութենէն: Աւ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայեաց ընկենուէ 'ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն 'ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով 'ի ծածուկ, և համբաւէ զնրմանէ այսպէս. «Ա իզեալ աստուածոցն զՎրայ և կենդանացուցեալ, լցին զփափաք մեր և զհեշտութիւն. վասն որոյ աւաւել յայսմհետէ պաշտելիք են 'ի մէնջ և փառաւորեալք իբրև հեշտացուցիչք և կամակասարք:» Անգնէ և նոր իմն պատկեր յանուն դիւաց և մեծապէս զոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զՎրայ: Աւ այսպէս համբաւեալ զնմանէ 'ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեւեան, դադարեցուցանէ զխաղմն <sup>(94)</sup>:»

Հայսոսիկ 'ի բանս արձագանգ Արգոյն վիպասանաց՝ թէև 'ի խորին հնութեան անդ հնչեցեալ, ազդոյ իմն եղանակաւ լինի լսելի. քանզի այս ամենայն մանրամասն հանգամանք պատերազմին և մահ

(94) Խորեն. գեր. մ. գլ. ԺԵ:

ուան Վրայի, և կեղծեալն 'ի Շամիրամայ դարձ  
 արքային Հայոց 'ի կեանս, և հաւանեւն Հայոց կեն-  
 դանանաւոյն Վրայի աստուածոցն լիզելով զդի նորա,  
 ոչ այլ ինչ են բայց եթէ բուն կարծիք և ասած  
 հնոցն մերոյ աշխարհիս, յորս հեթանոսական սովո-  
 ըութիւնք մերոցն՝ բանաստեղծական ոգւով զար-  
 դարեալք, երգեալ և աւանդեալ լինեին 'ի վիպա-  
 սանաց: Սանաւանդ վերադառնալն Վրայի 'ի կեանս՝  
 արժանի է մտադիր քննութեան, որ արդարև զհա-  
 յութիւն աւանդութեանն ցուցանէ: Վանզի գոյու-  
 թիւն աստուածոց՝ լիզողաց զվերս անկեւոց 'ի պա-  
 տերազմի և այնու կենդանութիւն հաղորդողաց սպա-  
 նեւոցն, թուի լինել մի 'ի մասանց հաւատոյ նախ-  
 նեաց մերոց 'ի հեթանոսութեան անդ: Վն մատե-  
 նագիրս մեր տեսանեմք ուրեք ուրեք 'ի կիր արկ-  
 եալ զբառս Յարուէլ (<sup>95</sup>), որ մին 'ի բնիկ աստուա-  
 ծոց Հայոց երևի լինել: Ստուգութիւն անուանս  
 ակնարկել տայ մեզ յայն ինչ, զոր յարուէլ առնեին  
 ընդ դիական Վրայի. այսինքն՝ «նորորդ լիզելով կեն-  
 դանայտեանէն զպանեալն: Ալ զի մի 'ի հաւատալի  
 մասանց էր այս կարծիք առ հինսն մեր՝ յայտ անտի  
 ևս է, զի որ ինչ զՎրայէ պատմի չէ միակ և եթ-  
 յիշատակութիւն առ մատենագիրս մեր: Վն Փաւս-

(<sup>95</sup>) Սեւոսայն չեմք բառիս էն Վրայէլ և Վրայէլ. թեպ  
 առաւել հասանալան ըստի յարաւէլն չեմ, որպէս և  
 «պարագանքան ընդ նորին՝ զոր պատմ, ցուցանէ. և  
 ոչ էլէ Վրայի լիզող՝ որպէս թէնէ Վրայ Վրայաբանն:

տոսի Ռիւզանդացւոյ գտանեմք զնոյնանման աւանդութիւն նաև զգօրավարէն Հայոց Սուշեղէ, զորմէ առ թաղաւորն մեր Արազդատ քսիս մատուցեալ՝ Ռատ Սահառունի դայեակ արքային՝ յինքն յափշտակել կամելով զսպարապետութիւն աշխարհիս, յարևէ արկ զնա: Եւ այս էն բանք Ռիւզանդացւոյն:

»Եւ եղև իբրև տարան զմարմին սպարապետին Սուշեղի՝ ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտև տեսանէին զգլուխ նորուն զատ ՚ի մարմնոյն անտի: Օ ի ասէին. »Վորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վեր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց՝ զինու խոցեալ է զդա: » Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ՚ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եղին ՚ի տանիսն աշտարակի միոյ. ասէին թէ վասն զի այր քաջ էր, »Սուշեղք իջանէն և յարուցանէն զդա: « Սահապան կային և ակն ունէին յառնելոյ՝ մինչև նեխեցաւ մարմինն: Սպա իջուցին յաշտարակէ անտի, և լացին և թաղեցին զնա որպէս օրէն էր <sup>(96)</sup>:

Ստույգից կամ յարուցից զնոյն առնէն ընդ դիւոյն Սուշեղի, զոր ինչ աստուած ընդ Սրային. և ոչ միայն այս, այլ և ամենայն հանգամանք նախկին սովորութեանս նոյն էն յերկոսին դէպսդ: Վանսղի

(96) Փաստս Ռիւզանդ. Պատմ. Հայոց, Ա. էնէրէէ, 1832. Վարդուբէնն է. ԳԼ ԼԳ:

և՛ առ Կյորենացւոյն և՛ առ Փաւստոսի զդիւ սպաւ-  
 նեւոցն հանեն՝ զՎ. լային ՚ի Վերնափոսան ապարանից, իսկ  
 զՎ. ուշեղին ՚ի քանի՞ն աշտարակի Բոյ. անդ ապարանք  
 լեզուն, սաս՝ աւելից: Հաւելու Վիւզանդացին, և  
 Թե յյառնեւոյ ակն ունեին նմա (Վ. ուշեղի), մինչև  
 զգլուխն անդէն ՚ի կոճեղն կարեալ կցեցին և հա-  
 նին եղին ՚ի տանիսն աշտարակի միոյ. ասէին, Թե  
 վասնզի այր քաջ էր, » Վ. ուշեղք իջանեն և յարու-  
 ցանեն զգա: « Վ. ստանիքն ակն ունեին յարուժեան  
 սարանեւոյն, ակն ունեին, և Թե աւելեղք իջանեն և  
 յարուցանեն զնա: Վ. սա ուրեմն այս էր մասն ինչ  
 հաւատոյ առ այնտիկ, որք ակն ունեին միջնորդու-  
 թեամբ ապտուածոց յարուցեալ տեսանել զսպան-  
 եալս ՚ի սպտերազմի, և այն՝ զարտաջ և զաջ զօրավարս  
 և և Թ, և ոչ զտակահանս:

Եթե ճշմարիտ է այս, ուրեմն որ զՎ. լայե սպա-  
 մի ՚ի վերոյիշեալ բանա Կյորենացւոյն՝ բնիկ հայ-  
 կական աւանդութիւն է, և ոչ և Թե խօսք քաղցեա-  
 ցի սպտմարանից. և ոչ միայն հայկական աւանդու-  
 թիւն, այլև սեպհական ծնունդ մտաց վիսպամանոյն  
 մերոց հոց՝ մուծեալ ՚ի Վիսուէ եղեալ ՚ի քաղ-  
 դեացի մատեանս:

Վ. յսու և և Թ հարաւոր լինի խմանալ զայն մեծ  
 տարբերութիւն, զոր առ Հոյն, Հառվմայեցի և Հայ  
 մատենագիրս տեսանելք ՚ի հաղորդելն ամենեցուն  
 նոցա զսպտմութիւն Շ. ամիրամայ. Աստմարանք եր-  
 կոցուն առաջին ազգացդ զհեա գնան աւանդութեան,  
 որ գուցե առ Աարսիկս ընկալեալ էր ընդհանրա-

պէս <sup>(97)</sup>. Իսկ Հայք կամ լաւ ևս ասել՝ վիպասանք մեր  
առաւել Հաւանական համարեցան զոր ինչ յաշխարհի  
իւրեանց և առ դրացի Մտորիս պատմիւր, ասել:

Օ այս այսպէս եղեալ՝ գուն գործեսցուք մեկնա-  
բանել ՚ի հարեանցի և զայն մթին տեղի ՚ի գիրս  
Հասարակապետութեան Պղատոնի, ուր սա ՚ի մէջ բե-  
րէ զառասպելն Առ հայոյն: Եւս խնդիր մինչ ցայս  
վայր ժամանակի անլուծանելի մնայ. քանզի և՛ հին  
և՛ նոր գիտնականք գողցես ընդ խարխափս գնան ՚ի  
քննելն իւրեանց զայն, ոչ ինչ ասել կարելով ստու-  
գիւ, որ արժանի իցէ հաւատալոյ: Եւս մեզ, եթէ  
աւանդութեամբ հնոցն մերոց մարթ է պարզաբանել  
զյիշեալ առասպելն՝ առ Պղատոնի եղեալ: Սակայն  
նախ քան զառաջարկելն յաղագս խնդրոյս զմեր կար-  
ծիք, կարևոր դատիմք բերել աստ զբանս յոյն փի-  
լիսոփային առ ՚ի կատարեալ խելամոռութիւն ըն-  
թերցողաց զոր հանդերձեալս եմք ասել: Այլ ահա  
այս ինչ պարունակի ՚ի նոսին.

»Շէ այս զրոյցն Ալկինոյեայ, զորոյ հանդերձեալ  
եմ՝ ճառել, այլ պատմութիւն առն քաջասրտի՝  
Հայոյն ասեմ Առայ, ծնեցելոյն ՚ի Վամփիւլիա:  
Սպանաւ սա ՚ի պատերազմի. զկնի տասն աւուր ՚ի  
վերայ անցանելոյ՝ այնինչ բառնային զնեխեալ դիա-  
կունս անկելոցն ընդ նմին ՚ի պատերազմի, զնորայն

(97) Արեւիտս Արեւիտայ ՚ի գե-անէ Պարեյ հանեալ ասե  
չե-ր պատմութեան, յորձե և՛ Վեդրոյ Սեկեւ ասեա-  
լոր էնչ զԱ ասերաճայ:

գտին ամբողջ և անխախտ: Առեալ տանէին զնա 'ի տուն առ 'ի դիահանս յարդարել նմա. և յերկոտաստաներորդում աւուր մինչդեռ եդեալ կայր 'ի խարուկի՝ վերադարձաւ 'ի կեանս և պատմել սկսաւ զանդէսն.....»

»Ասասպելս այս՝ յաւելու Վղատոն, զբանս առ Վլաւկոն դարձուցեալ, պահպանեցաւ յանյուշութենէ, որ և կարէ զմեզ ինքեանս պահպանել 'ի կորըստենէ, եթէ միայն հաւատասցուք նմա. այնուհետև ողջամբ անցցուք ընդ գետն Աթէ, և անարասս պահեսցուք զհոգի մեր յամենայն ապականութենէ (98):»

Վաղղիացի իմաստասէրն Վուզէն՝ թարգմանիչ գործոց Վղատոնի, ընդ նմին և գողցես ամենայն Աւրոպացի գիտնականք, 'ի վարանս անկանի՝ ոչ գիտելով զինչ ասել զծագմանէ առասպելիս: Տարակուսանք իմաստասիրիս յայսինեալ տեսանի 'ի ծա-

(98) Oeuvres Complètes de Platon, trad. par V. Cousin, Paris, tome X. p. 279—295. « Ce n'est point le récit d'Alcinoüs que je vais vous rapporter, mais celui d'un homme de cœur, Et l'Arménien, originaire de Pamphylie. Il avait été tué dans une bataille: dix jours après, comme on enlevait les cadavres déjà défigurés de ceux qui été tombés avec lui, le sien fut trouvé sain et entier; on le porta chez lui pour faire ses funérailles, et le douzième jour, lorsqu'il était sur le bûcher, il revécut et raconta ce qu'il avait vu dans l'autre vie. — «Ce mythe, mon cher Glaucon, a été préservé de l'oubli, et il peut nous préserver nous-mêmes de notre perte si nous y ajoutons foi; nous passerons heureusement le fleuve Léthé, et nous maintiendrons notre âme pure de toute souillure. » —

նօթարբանութիւնս նորա առ յիշեալ թարգմանու  
 թիւնն Պղատոնի, որ և յայս բովանդակին. »Ար ինչ  
 առ առաւելի հայի՝ զայս ինչ կարծել պարտ է,  
 եթէ նման առասպելեացն Վարդգիսայ և Փեդուլի,  
 շինեալ թուի այն՝ ի վերայ հիման, զոր չէ հնա-  
 րեալ Պղատոնի, այլ փոփոխեալ կամ յարմարեալ  
 արդարև: Թէև չգիտեմ զիսկութիւն հիման առաս-  
 պելիդ, սակայն և ոչ ժխտող կամիմ լինել գոյու-  
 թեան նորուն. գուցէ Պղատոնի ժողովեալ է զայն  
 ՚ի ճանապարհորդութիւնս իւր զկողմամբ Նըլեկից:  
 Սակայն հանգամանք ժամանակի և տեղոյ խառն  
 գոլով յոյժ, միանգամայն անհնարին գործեն առա-  
 ջարկել զայսմանէ որևէ կարծիք: Սին իրի ոչ  
 դանդաղիմ ՚ի մերժելոյ զմեկնութիւն յետին մատե-  
 նագրաց, որպիսիք են Աղեմէս (Յաճախապարհ. Է.) և  
 Ալսեբիոս (Պարտապ. աւելաբան. ԺԳ.), որք ՚ի Ա-  
 հայն տեսանել կամին զՕրտաշար. և ՚ի հաստատու-  
 թիւն կարծեաց իւրեանց յառաջ բերեն զսկիզբն  
 միոյ ՚ի գրոց իմաստնոյս այսորիկ, որ անվաւեր երևի  
 լինել, որոյ և աղբիւր ապաքէն լինել պիտի սոյն  
 այս տեղի գրոցն Պղատոնի: Սովորութիւն էր առ  
 Նըլեքսանդրացի՝ թէ՛ քրիստոնեայ և թէ՛ հեթանոս  
 փիլիսոփայս, զիմաստութիւնն Պղատոնի առ Նըլեկը  
 յարաբերել, ոմանք՝ Նըլեկից, միւսք՝ Ագիպտացւոց,  
 իսկ այլք Պարսից ընծայէին զայն <sup>(99)</sup>:«

(99) Նոյն. Եւրգճանուրեան Պղատոնի, հաս. Ժ. էր. 377 —

Եւ յսու և եթ զլիսաւորէ իմաստասէրն Վաղղիացի զխոհեմ տարակուսանս իւր, յորոյ 'ի լուծումն ձեռնամուխ լինել համարձակիմք՝ 'ի նպաստ անձին կոչելով զհնագոյն աւանդութիւնս հնոյն հայաստանի. միայն եթէ յաջողեսցի այդ ձեռնարկութիւն և տացի մեզ հնութեամբ մերոյ աշխարհիս՝ լոյս դոնեայ աղօտափայլ շողացուցանել 'ի վերայ խաւարին խնդրոյդ:

Վասի առաջին՝ տեսցուք յինչ բովանդակի առասպելն 'ի Պղատոնէ պատմեալ. «հայ ոմն քաջասիրտ՝ Լու անուն, սպանանի 'ի պատերազմի. գտեալ զդէնորա անխախտ 'ի մէջ անկելոցն՝ տանին 'ի տուն իւր և հանեն 'ի խարոյկ . մինչդեռ եղեալ կայր 'ի խարուկի, յառնէ և պատմէ զհանդերձեալսն:»

---

me celui du *Gorgias* et celui du *Phédon*, il repose sur une donnée première que Platon n'a pas faite, mais qu'il aura librement arrangée. J'ignore quelle est cette donnée, mais j'en admets l'existence, et il est même vraisemblable que Platon l'aura recueillie dans ses courses du côté de l'Orient. Mais les circonstances de temps et de lieu sont ici tellement indéterminées, qu'il est impossible de se livrer à aucune conjecture raisonnable à cet égard. Je suis donc loin d'admettre les interprétations d'écrivains postérieurs, comme Clément (*Stromat.* V) et Eusèbe (*Præpar. evang.* XIII), qui voient dans Er l'arménien, Zoroastre, et qui citent à l'appui de leurs conjectures le commencement d'un livre de ce sage, livre évidemment apocryphe, et dont la source aura été précisément ce même passage de Platon. C'était un système pour les philosophes alexandrins, chrétiens ou païens, de rapporter la sagesse de Platon à l'Orient, les un à la Judée, les autres à l'Egypte ou à la Perse.»

Օչայսոսիկ բանս դարձեալ համառօտեալ՝ գտցուք  
'ի նոսին զայս իմաստ. » Քաջ՝ անկէսլ՝ 'ի պատե-  
րազի, յառնէն: «

Խնդրելի է այժմ, եթէ առ որո՞ւմ 'ի հնագոյն  
ազգաց Մսիոյ գտանի այդ վարդապետութիւն. որքան  
եսս գիտեմ, բաց 'ի հայոց և ոչ առ ուրուք 'ի  
նոցանէ: Իսկ առ հայս քարոզիւր այդ ուսումն, եթէ

Թագաւորի և Կաջ զօրավոր՝ սպանեալք 'ի պատե-  
րազմի, յառնէլ կարեն.

Եւ յառնեն՝ օգնակնաւիւնսն մարտաջոյ.

Եւ օգնականութիւն աստուածոց՝ էր վերաւ զվերս  
պանելոցն,

Եւ լիզելովն կէտքանայոցանէլ:

Եւ աստուածոցն այնոցիկ անուն՝ յարաւել լսիւր  
առ նախնի հայս:

Գոյութիւն վարդապետութեանդ առ հայս ապա-  
ցուցանի վերոյիշեալ երկու հատուածովքն, յորոց  
մին առ Մարայն մեր վերաբերի, իսկ երկրորդն՝ առ  
զօրավարն Մուշեղ: Յերկոսին 'ի դէպսդ յառնէլն  
արքային և քաջի զօրապետին քարոզի:

Օչայդ և յառապելին Պղատոնի տեսանեմք. քան-  
զի Լոյս յառնէ:

Սովորութիւն էր հայոց զքաջ անկեալն 'ի պա-  
տերազմի տանել 'ի տուն իւր և հանել զդի նորա՝  
կամ 'ի վերնաբուն ապարանից՝ որպէս զՄարային, կամ  
'ի քանի աշխարհի՝ որպէս զՄուշեղին:

Օ այդ և առ Պղատոնի տեսանեմք. քանզի զդի  
 Լուայ հանեն 'ի Խորոյն, որ է բարձրագէզ կոյտ  
 փայտից. որ և զօրութեամբ միենոյն է ընդ վեր-  
 նատան ապարանից կամ տանեաց աշտարակի. միով  
 բանիւ՝ հանէին զդի սպանելոյն 'ի Բարձրագէզ քեղի:

Յաւելցուք առ այս և զգոյտելին աստուծոյ յա-  
 թուելոց աս հինն թը, որով ակն յանդիման ցուցանի  
 հայութիւն հեթանոսական ուսմանդ:

Մարթ է այժմ 'ի վերայ բերել, » եթէ իմաստ  
 աստուծու ընդ որ առ Պղատոնի, այն է՝ քաջ՝ անէկտ  
 'ի պատերազմի, յասանէն, ոչ այլ ինչ է բայց եթէ բուն  
 հեթանոսական վարդապետութիւն նախնի հայոց:«

Օ կնի այսորիկ կարևոր է որոշակի ցուցանել, եթէ  
 'ի իցէ արդեօք հայ Լուան առասպելին Պղատոնի:  
 Թէ և ճշմարիտ է ասածն Արզէնի, » հանգամանք  
 ժամանակի և տեղւոյ խառն գոլով յոյժ, անհնարին  
 լինի ամենեին առաջարկել զառասպելէս որ և է  
 կարծիք. » սակայն մեզ՝ զկնի յայտնի ցուցանելոյ ըզ-  
 հայութիւն իմաստին պղատոնեան առասպելին և  
 զնոյնութիւն նորին ընդ որում զՄարայէ երգէին  
 վիպասանք, ոչ անտեղի թուի՝ զԼուայ յոյն փիլիսո-  
 փային Մարայի հայնապետն քարոզել: Այլ այսմ ար-  
 դարև սյսպէս պարտ է լինել, քանզի այդ առասպել  
 յաղագս վերադառնալոյ արքային հայոց 'ի կեանս՝  
 գոլով մին 'ի հնագոյն աւանդութեանց հնոյն Մսիոյ,  
 'ի հայաստան աշխարհէ տարեալ երևի Մսորոց  
 յերկիր իւրեանց, ուստի և տարածեալ ընդ ողջոյն

Մ. րեւելա: Մակ Պղատոնի 'ի ժամանակս ճանապարհ  
հորդութեան իւրոյ ժողովեալ՝ յունացուցեալ է  
զայն, 'ի բաց թողլով զմանրամասն հանգամանս  
նորին:

Մակ Պատմիչի անուն, զոր 'ի վերայ Մուայ  
կամ Մուայի ասի՝ նշանակէ և ոչինչ. քանզի այդ  
քան հնագոյն անգիր աւանդութեան (1419 ամօք  
նախ քան զՊղատոն)՝ դարուց 'ի դարս անցանելով  
և յազգաց յազգս, հարկաւ պարտ էր փոփոխել ըստ  
արդարեան հերոսարանացն. այնինչ հին նորին, որ գլխաւո  
րըն է, անայլայլելի է մնացեալ:

Մ. ւ մատենագիրս յետին ժամանակաց, որպիսիք  
են Աղեմէս, Աւսեբիոս, Մակրոբիոս և այլք, նոյն  
պէս տեսանեմք յիշատակութիւն առասպելիդ՝ աղա  
ւաղեալ և ըստ քմաց փոփոխեալ: Մ. սոցանէ ոմանք՝  
որպէս ասացաք, ոչ դանդաղեցան Օրոսիոս քարո  
ղել զՄ. Վարժիք դոցա չէ ամենեին արժանի  
ուշադրութեան. քանզի 'ի գրոց Պղատոնի առեալ  
զառասպելն՝ ըստ կամաց յեղափոխեալ առաջարկեն  
զայն: Մ. յլ զարմանք այն է, զի ընդ նոսին և իմաս  
տուն չ. Մ. անձիճեան՝ յուսկէտս ժամավաճառ լինի,  
միջամուխ լեալ 'ի քննութիւն բայից և բանից յի  
շեալ հեղինակացդ, 'ի գիրս նոցա գտանել ջանալով  
զՄ. նահապետ մեր (<sup>100</sup>), զոր նոքա իբր թէ Օրոս  
դաշտ անուանեն: Պարտ էր նմա քննել ոչ զբանս  
Աղեմէսի, Մակրոբիոսի և այլոց, այլ յառեալ զսրա

(<sup>100</sup>) չ. Մ. անձիճեան. Չ. նախ. հ. 7. էր. 66:

տես աչս մտաց իւրոց 'ի բանս Պղատոնի, որ աղբի-  
 է կարծեաց հոգին ամենեցուն: Աւ զի՞նչ արդեօք պար-  
 ծանք մեզ, եթէ Օրադաշտ ոմն չայ իցէ լեալ:  
 Քանզի որ բուն Օրադաշտն է, որում և ընծայեն  
 զմատեան կրօնից Պարսից՝ Օկնդավէստա կարդա-  
 ցեալ, ապաքէն չէր չայ: Իսկ այլ ամենայն Օրա-  
 դաշտք՝ թէ չայ իցեն և թէ ոչ, քանզի աննշանք  
 ոմանք են, զի՞նչ մեզ փոյթ:

'Ի շարս երգոցս երրորդ կարգի դասեսցուք և  
 զայն, զոր 'ի չարամակերտի զՆսորի գաղթելոցն  
 'ի զարմէ Սենեքերիմայ պատմէին. զորս 'ի գալ  
 նոցա յաշխարհ մեր՝ բնակեցոյց Ակայորդի զկող-  
 մամբք Նսորեստանի: » 'Ի սոցանէ պերճքն յետոյ  
 ուրեմն՝ ըստ Խորենացոյ, մտերմութիւն վաստակոց  
 առ թագաւորսն մեր ցուցեալ, բղեշխութիւն կող-  
 մանցն արժանաւորեցան առնուլ <sup>(101)</sup>: « Իսկ յաւուրս  
 Աղարշակայ կարգեցան և սոքա 'ի թիւս նախա-  
 րարաց չայոց, որոց և պաշտօն էր՝ «արծա-տ» էրել  
 առաջի թագաւորին: Նստի յառաջեկեալ ասէ  
 Քերթողահայրն և անուն ազգին Ներծրունեաց, զոր  
 ստուգաբանէ ասելով, եթէ » զՆրծրունիսդ գիտեմ՝  
 ոչ արծրունիս, այլ «արծ-տ» ունի: « որ գեղեցիկ յար-  
 մարանք են վսեմ մտաց ծերունւոյն Խորենայ, և ոչ

(101) Խորեն. գեր. ն. գլ. իգ:

Ճշմարտութիւն: Քանզի զայդ անուն՝ կամ լաւ ևս  
 ասել Տակնուան, որպէս 'ի համառօտեալ բանից Ար-  
 գոյն երևի, նախ քան զԹագաւորելն Աղարշակայ  
 ընկալեալ էր զարմին Անեքերիմայ 'ի Հայոց աշ-  
 խարհի, և այն ըստ դիպաց: Քանզի ասէին, եթէ  
 եղև յաւուր միում այնինչ պատանի ոմն վաստա-  
 կաբեկ 'ի տանէն երևելի Ասորի գաղթականացս  
 այսոցիկ ննջէր 'ի բացի, անձրև սկսաւ գալ. և ահա  
 Թուրքեալ երևեցաւ յօդս արծուի, որ և եկաց ան-  
 շարժ 'ի վերայ մանկանն՝ տարածեալ զթևս հովանի  
 նմա: Աւ ապա իբրև դադարեցաւ անձրևն, այրել  
 սկսանէր արևն. և մանուկն 'ի քուն կայր, իսկ ար-  
 ծուի սաւառնաթև և 'ի տօթոյ արևուն պաշտպան  
 լինէր նմա: — Աստի և Արծրունիք անուն, որ այնու-  
 հետև 'ի վերայ զարմին Անեքերիմայ՝ 'ի Հայս  
 եղելոց, ասացաւ: Յոյր սակս և 'ի Հադամակերտի,  
 որ ոստան էր Արծրունեաց 'ի Ասպուրական Աա-  
 հանգի, պատմէին » Աթէ մանկան նիրհելոյ անձրև  
 և արև հակառակեալ, և հովանի ընկոյ պատանւոյն  
 Թալկացելոյ <sup>(102)</sup>: «

Այսպէս ահա թեամուխ լեալ 'ի հնութիւն  
 դարուցն անցելոց՝ գուն գործեցի որդիական սիրով  
 զասածս հնոցն մերոց՝ զթերին և զհատուկտորն,

<sup>(102)</sup> Խրեհ. գեոթ Բ. գլ Է:

զսրբազան նշխարս հազարամէից, զցրիւ անկեալն  
 'ի գանձարանի ազգիս՝ 'ի Աստուծոյ թեան ասեմ  
 Սոփիոսի Այորեհնացոյ, 'ի մի ժողովել (գուցէ ա  
 ռաւել քան զչափն ձկտեցայ), համարձակեցայ գոնեայ  
 մասամբ իւիք 'ի նորոյ վերականգնել զհիմն 'ի վեր  
 տապալեալն զարմանակերտ շինուած Արգոյն վիպա  
 տանաց, նման Տանկանն Արքեպիստ, որ անդ ուրեմն  
 'ի հնուին

» հատուած գրնացեալ...

'Ի Տուհաց գաւառէն

Օ, Քասաղ գետով.

Եկեալ նըստեալ

Բ՛զՇ ըէշ բըլբով

Օ, Արտիմէդ քաղաքաւ

Բ՛զՔասաղ գետով,

Կեւ Կեւ Երբ...

Արեւմտայ արեւմտ (105):

(105) 'Այն, գետ Բ. գլ ԿԵ.

Մնայ մեզ ասել զի՛նք և 'ի չեան սրտի՛ն հոռու  
գործնոց երգեին երգիչք մեր 'ի հնուն զազգա-  
յին վէպս:

Պարտ էր ապաքէն վիպացս այսոցիկ՝ պարունակո-  
ղաց յինքեանս զպատմութիւն ազգիս, տարածեալ  
լինել ընդ բոլոր հայաստան: Սակայն առաւել քան  
յայլ մասունս՝ պահպանեցան նորա 'ի ճորդիանէ հողման  
գինաւոր գաւառին Ղաղբան: Եւ Քերթոզաօրն Ար-  
գիչք Ղաղթան անբաժ են յերգոց վիպասանաց-  
քանզի ուր բանք են նորա զյետնոցս՝ անդ և զանուն  
առաջնոց անշուշտ գտցես:

Ստադիւրութեամբ ընթեռնելով զայնոսիկ տեղիս  
'ի Պատմութեան Այորեւացւոյ, յորս զազգային երգոց  
են խօսք, նկատեմք 'ի նոսին զյետագայ բառս՝ Արգիչ,  
Ղաղմանակ, Յոց, Պար և Ղամբիւն: Բացատրու-  
թիւն միոյ միոյ 'ի բաւիցս ինքնին ցուցցէ զի՛նք  
երգելոյ զվէպս առ հինսն մեր:

Մ. Արուհետե առ նախնիս մեր 'ի հնուն գիր  
ոչ գոյր 'ի միջի, հարկ էր ապաքէն վիպացն մերոց  
պահպանիլ աւանդութեամբ և եթ . որք և չտե-  
րական բան գոլով՝ յայտարարք գործոց նահապե-  
տաց և թագաւորաց, 'ի հանդի՛ն ժողովրդոց երգեալ

լինէին 'ի լաւ հասարակաց: Օչայս յայտ առնեն բանք  
 Խորենացւոյ. » Օչայս երգելով ոմանց բամբուամբ՝  
 լուաք իսկ ականջօք մերովք <sup>(104)</sup>. « — » Օրմէ ասէին  
 'ի հինսն մեր, որ բամբուամբն երգէին <sup>(105)</sup>. « — » Օչայս  
 տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւր-  
 եանց ասեն <sup>(106)</sup> «. և այլն:

Աւրեմն Արգշաց էր գործ երգել առաջի ժողովար-  
 քեան զվէպոս «պգի»:

Բ. Առ նորին Խորենացւոյ տեսանեմք զյետա-  
 գայ բան. » Ի Վառասանակնէն այս գտանի ժողովեալ  
 'ի դիւանի արքունեաց <sup>(107)</sup>. « — զոր Նոր Վառարանն  
 չգիտեմ էր վասն մեկնաբանէ » Ե՛մ յերգաց արչանագը-  
 ռելոց <sup>(108)</sup>: « Աստ մեզ գոռասանակն ոչ նշանակէ երգ  
 արչանագըռու այլ որովհետև գոռասանակն է յոգնակի  
 գոռան բառի (որպէս զօրակն, բուժակն) և գուսան  
 առ մեզ զխաղաղոյն 'ի ըստրոնի կամ զկարակերգուն յայտ  
 առնէ՝ յոյր սակս առաւել յարմար թուի մեզ ընդ  
 անուամբդ՝ զերգելն խաղաղոյն իմանալ, որք առաջի  
 ժողովրդեան 'ի հրապարակս ճիւղաւորանէն զպարու-  
 նակեալն յերգս վիպասանաց՝ որպէս և առ զանազան  
 նախնի ազինս: Ալ զայս ասպացուցանէ

<sup>(104)</sup> Պ. եր. ա. 4. լա.

<sup>(105)</sup> Պ. եր. ա. 4. իդ.

<sup>(106)</sup> Պ. եր. բ. 4. ծ.

<sup>(107)</sup> Պ. եր. ա. 4. ժդ.

<sup>(108)</sup> Հաս. ա. էր. 582:

Պ. Միւս բան Աորեւնացւոյ... » յաճախագոյն հինքն Արամազնեաց 'ի նուագս բամբուան և յերգս ցոյց և պարուց զայսոսիկ ասէն յիշատակօք: »—Աստ եղեալ ցոյց բառի երկրորդ ձևն է ցոյց, որ արմատ է բայիս ցոյցանէ՛ճ, և նշանակէ զգործողութիւն գուսանին, որով սա հանդիսացելոց զգործս որևէ անձին ցոյցանէ (представление, représentation), և ոչ՝ որպէս 'Աոր Աառարանն ինքնակամ նոյնացուցանէ զայդ անուն ընդ ցոյցանէ՛ (109) բառի:

Դ. Արկրորդ բառ 'ի վերոյիշեալ բանիդ՝ է Պար, որոյ բուն սկզբնական նշանակութիւն է շրջան, որ և 'ի բանս Աորեւնացւոյն զնոյն ունի նշանակութիւն, որպէս և յունականն հելլէօն (հելլէօն էպիլէօն): Աւրեմն

Արգտ ցոյց և պարուց » ոչ այլ էնչ ցոյց ասէն, բայց էնէ երգտ գոսանաց և երգչաց՝ Վէպս ասողաց ժողովրդեան, զնոստ պար ասելոց: «

Ե. 'Ի նուագարանաց, որովք երգէին երգելք մեր՝ յիշատակի 'ի պատմութեան Աորեւնացւոյ միայն իւսմբիւն: Օչայս բառ ոմանք ծնծղայ ստուգաբանէն (պէս 'Աոր բարար.) ոմանք՝ հելլէօն (պէս շէն բարար.): Ոչ մին և ոչ միւսն հաւանական թուի մեզ: Աշխիւ ցուցանել զիսկութիւն նուագարանիդ չէ դիւրին. զայս միայն համարձակ ասել կարեմք, եթէ բարբիտն հնոց չէր ծնծղայ, այլ նոստարան լարիտ և աղէօտ հանդերձ: Աորեւնացի զկնի բերելոյ զերգն Ահագանի՝

(109) Վար. Բ. էր. 917:

ասէ. » զայս երգելով ոմանց բաճառաճ լուաք իսկ  
 ականջօք մերովք: « — Յովհաննէս կաթողիկոս <sup>(110)</sup>  
 զնոյն բան Վերթողաճօրն երկրորդելով յաղագս  
 Վահագնի՝ զնուաղարանն որոշէ » Կոնստանդուպոլս  
 քաղաքի « անուանելով զայն: Այլ է Կոնստանդուպոլս,  
 ապա ուրեմն և ոչ ճիշդայ: »

Այլ աստ զկայ առցէ բանս:

Յ 1761 թ. ՀԱՅԿԱՍՏԱՆ

(110) Յովհ. կաթ. Պատմ. Հայոց, յԱրտասուղէճ, 1843,  
 էր. 14: » Տեղեան ճիշտ ուրիշ լիաք, զՏեղեան,  
 զՎահագնի, զոր 'է կոնստանդուպոլս աղէքախս ընդ  
 վիշապայ հաճառաւէն հոռաւել նմա և յաղբէլ, և ընդ  
 Կոնստանդուպոլս նահապոտիտաւելանցն զնա համե  
 ճապէլ: «



Մանսթուրիւն.

	Տղեւէ	Լեւեռե
Էրեւ,	ԿՊԶ.	
16,	8 'ի ներք. գերեանցն՝	գերեաց
38,	8 'ի ներք. վիպասանքն	վիպասանքն
60,	2 'ի վեր. Պատմութեան	Պատմութեան